




ԼՕԳՐԱԳՐԱՆՔ ԲԱՆԱԾՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ
ԵՒ ՔԱՆԴԱԿԱՆՆԵՐ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻԱՄԵԱՅ



ՅԵՐՈՒՍԱԼԵՄ
Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1875

ՅՈՒՅԱԿ ԳՐՈՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՈՒ

ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎ ԲԵԱՆՅ

ԵՒ ԱՐԺԳԼՈՒԹԻՒՆԵՐ ՆՈՅԻՆ

ՂԵՂԵ ԳԵՂ.

- Աղանձ . Հայերենէ փոխեց ՚ի Տաճկերէն Յ. Քիւրքեանով . տպեալ 1872.
 Աղօթադիրք Արշալան տէրիաց, աշխարհիկ լեզուաւ .
 Անուրջը ՚ի Սին, ողեսաց Մ. Թաթուլ . 1869 .
 Առաքինութեան նախնա, կամ Սենտոր մանկանց, թարգմանեց Տ. Հ. Թ. Ս.
 Աւետարան տառնի. Ս. Կիլիզցոյ մէջ կալդայեցեայից աւետարանն էն .
 Աւետարան փոքր . Տպեալ 1867 .
 — Նոյնը Կաթարաւով . Տպեալ 1867 .
 — Նոյնը ճշտու . Տպեալ 1868 .
 Բանաստեղծութիւն, սղակերտահեաց մէջ . Բ. Տիւր 1874 .
 Բացարարութիւն Հրաժարման եւ զղջման եւ առաւօտեան երգաց շնորհալ . (*)
 Գաղիկ վերջին արքայ Հայոց Բագրատունի, ողբերգութիւն . Տպ. 1672 .
 Գործք Առաքելաց . Տպեալ 1867 .
 Գործք Ոսկիւնիկ Սանուէլ Ոսպրի հրէի . Տպեալ 1867 .
 Գովառանք . Տպեալ 1867 .
 Կիլիզ, պատմութիւն Վարդանանց պատերազմին ընտիր դործ նախնաց .
 Կրկնայթ կրկն . Տպեալ 1851 .
 Կրկն խօսք, եկիզցոյ պաշտօնից ուղղուած . Տպեալ 1873 .
 Կրկն խօսքի, աղօթադիրք, դործ նախնաց . Գ. տպագ. 1870 .
 Զանադանութիւն հինգ դարուց . Բ. տպ. 1862 .
 Ընդհանրական թուղթք Ներսիս Շնորհալոյ . Տպեալ . 1874 .
 Թանգարան խրատու . Գ. տպ. 1870 .
 Թափորի տնտրակ տորեկան, Տպեալ 1839 . (*)
 — Նոյնը շարաթական . Տպեալ 1838 . (*)
 — Նոյնը Ա. Յակոբայ տանաթին մէջ կատարուած թափորներու հաճար
 Թաւարանութիւն համառօտ . Ս. Պ. Փաշապեանցի . Գ. տպ. 1869 .
 Ժամագիրք խաղաղութիւն . Տպեալ 1866 .
 Ժամագիրք տառնի . Տպեալ 1870 .
 Խնդիր Ս. Տեղեաց եւ նորս սղաշտնական բնութիւնը . Տպեալ 1871 . (**)
 Խորհրդածութիւն Ս. պատարագի, դործ նախնաց . Տպեալ 1842 .
 Խորհրդատար Ս. պատարագի . Տպեալ 1873 .
 Կարգադրութիւն առողջութեան . Տպեալ 1871 .
 Կենսագրութիւն Բաաքալոյ . Տպեալ 1869 .
 Կաթարալի հոգեւոր բանից . դրեց Արդար Խոննց . Տպեալ 1853 .
 Կրթարան Աւետարանական բանից . Դաս Ա. Սինն Պետրոս .
 " " " Դաս Բ. Սանայուցի .
 " " " Դաս Գ. Որդիք Աստուծոյ .
 Հանապետութիւն երկրաւորան առաքելաց, հանգերձ յաւելուածով .
 Հանապետութիւն Քրիստոնէական աւանդ . Տպեալ 1873 .
 Հոյնի վերաց . Տպեալ 1852 . (**)

4
2
1
7
30
6
12
30
1
6
5
6
3
3
7
7
3
7
40
18
18
3
2
4
3
20
50
6
10
10
5
2
6
1
1
1
4
4
6

20

20


20

20

20

Ե Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՍԷԻ ԽԱՆԴԻՆ (**) ԵՄԻ ԳՐԻՆ ԿԱՆԱԳԻՄ ԵՆՈՒՆ ԵՆՈՒՆ
 ԻՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԲԱՆԴԱՐԱՆԻ ԵՆՈՒՆ



Մ Ի Մ Ս

ՏԵՍՆԵՐՈՒՄ ՏԱՐԻ
ԹԻՒ 5.

Ա. Մ. Ս. Ա. Գ. Ի. Բ.

ԿԱՅՈՒ 31
1875.

Ա. Գ. Ա. ՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Ի ԶՈՒՒՅՆԵՐԻՍ (*)

ԶՈՒՅՆԵՐԻՍ Ժողովրդային կրթութեան վերայ ընդհանրապէս խօսեցանք, բայց աւելի տեղեկութիւն տալու համար՝ հարկ է նահանգներուն վերայ եւս խօսիլ. ժամն զի, ինչպէս կանխաւ ասացինք, կրթութեան ազատութիւնն այնչափ ընդարձակ է Զուիցերիայ մէջ, որ այս մասին իրարմէ կը տարբերին Նահանգներն թէ՛ դաստիարակութեան յատուկ սահման սահմանափակ և թէ՛ ինքնօրէն նաչաւաճքով, եւ որովհետեւ իւրաքանչիւր Նահանգի վերայ մասնաւոր սպե-

խձակն շատ երկար կը լինի, ուստի կընտրեմք երկու Նահանգներ միայն՝ Յիւլի և Նիւլաթէլ, առաջինն իրրեւ տիպար այն Նահանգներուն, ուր Գերմանական լեզուն կը տիրէ, իսկ երկրորդն իրրեւ տիպար այն Նահանգներուն, ուր կը տիրէ Ֆրանսերէն լեզուն:

Եթէ Պրուսիայ մէջ գաղութական կազմակերպութիւնն միւս պետական է, ուր վերին իշխանութիւնն ամեն բան կը կանոնաւորէ և կը տնօրինէ. ընդհանրապէս Յիւլիի մէջ գաղութական կազմակերպութիւնն բոլորովն հասարակապետական է, ուր բոլորը պի-

(*) Հարաւորութիւն, տես թիւ 4.

ինքեանք կը խառնուին կրթութեան գործոյն և ինքնին կը անորինեն :

Յիւրիկն 266,265 բնակիչ ունի, յորոյ 255,000 բողոքական են : Տէրութիւնն կը հսկէ ամեն կարգի և աստիճանի գաւրոցներուն հասարակոյ կրթութեան Վերին Խորհրդոյ միջոցաւ, որ վեց անդամներէ բաղկացած է, չորսն Մեծ Խորհրդէն ընտրուած, իսկ երկուքն գաւրոցական Սինոդէն : Բաց յայտմանէ կան մասնաժողովներ ամեն գաւրոցական շրջանակներու մէջ, որոնք կը հսկեն գաւրոցներուն վերայ և տարին մի անգամ յատուկ պատգամաւորի ձեռամբ տեղեկագիր կը մատուցանեն Արթութեան Վերին Խորհրդոյն, յորում ազատօրէն վիճաբանութեան կ'առնուին ուսման խնդիրներն : Շրջանակներու մասնաժողովներու անդամներէն կ'ընտրեն 3 հատն ուսուցիչներն, 9 կամ 10 հատն քաղաքացիներն : Ամեն շրջանակի ուսուցիչներն ունին յատուկ ժողով, և տարին չորս անգամ կը գումարին առանց բացառութեան որ և իցէ անգամայ : Արվիճեն ուսման խնդիրներուն վերայ եւ տեղեկագիր կը տան շրջանակի մասնաժողովին, որ գաւրոցական արկղն եւ գործերն կը տնտեսէ : Ամեն շրջանակի ուսուցչաց ժողովներու նախագահներն տարին մի անգամ կը գումարին, իրենց բաղձանքներն եւ կարծիքներն Վերին Խորհրդոյն հաղորդելու համար : Ամեն ուսուցչական ժողով ունի իւր յատուկ գրադարանն :

Գրոցական Սինոդի անգամ կը համարուին ուսուցչաց ժողովներու բոլոր անդամներն, այսինքն բովանդակ ուսուցանող մարմին : Սինոդն տարին մի անգամ կը գումարի և իւր գիւանն կը կազմէ երկու տարուան համար : Շատ սիրուն և փառաւոր են Սինոդական գումարումներն, Նիստն հրապար-

տակողան է, ուր կը վիճուի գոտտիւրակութեան խնդիրներուն վերայ, կը կարգացուն տեղեկագիրներ և յիշատակագիրներ, աղօթքներ եւ երգեր կ'երգուին, խնջոցքներ կը լինին, որով սէր եւ ժողովութիւն կը տարածուի բոլոր ուսուցչաց մէջ, և այսպէս կը զարգանայ, կը զօրանայ ուսուցչական մարմինն :

Այս եղանակաւ գոտտիւրակն կը պաշտպանուի, կը խնամուի և կը յարատեւէ : Աջատութեան և հաւատարութեան զգացումներն կը բացուին ու կը ծաղկին : Թաթմութիւն, նախանձ, ատելութիւն, վհատութիւն և թուլութիւն կը հաղածին : Սոյն գումարումներն թէ գոտտիւրակական կրթութիւններ և մարզեր են, և թէ տանր, Գումարումներէն ղինի վինախազութիւններ եւ ղինուորական վարժութիւններ կը կատարեն : Սոյն ճշմարիտ հասարակապետական գրութիւնն իրաւունք կը տայ գոտտիւրակին թէ իւր կարծիքն ազատօրէն յայտնել, թէ քուէ տալ, և թէ ունի իւր պարբերական գործին, որուն մէջ կարող է հրատարակել իւր գաղափարներն ու իղձերն և հասարակութեան ծանօթացնել :

Սինոդական գումարման տեղին ամեն տարի կը փոխուի և Տէրութիւնն կը մասնակցի գրաւոր աշխատութեանց սպագրական ծախուց :

Վեց տարեկան հասակէն թէ տղայք եւ թէ աղջկունք պարտաւոր են գաւրոց յաճախել, ապա թէ ոչ ծնողք տուգանքի կ'ենթարկին :

Գաւրոցներն երկու կարգ կը բաժնուին — Նախնական, ուր աշակերտողք կը յաճախեն երեք տարի, և Իշական կամ Իսիական (Realschule) որք նոյնպէս երեք տարուան շրջան ունին, Մանկունք պարտաւոր են երկու տարի ևս

յոճախէլ Կրկն-Լեան դպրոցն (Er-gänzungsschule) շաբաթն չորս ժամ և երաժշտութեան դպրոցն շաբաթն մի ժամ։ Աշակերտաց հարիւր թիւն եթէ անցնի, անպատճառ մի դասարան և մի դասատու եւս կը յաւելնայ։ Դասարաններուն մէջ շաբաթն 24 ժամ դաս կ'աւանդուի։ Աւանանիւթերն են — Կրօն և Քարոցականութիւն, Պատմութիւն և Աշխարհագրութիւն, Բնական Պատմութիւն, Փեղագրութիւն, Երգ, Նկար, Մարմնամարզութիւն, Ձեռագործք (աղջկանց համար)։ Յիւրիսէն և Վենիսերթուրէն դատ, ուրիշ տեղեր տղայոց և աղջկանց դպրոցներն անբաժան են։ Երբ դպրոցն միայն մի ուսուցիչ ունի, պարտաւոր է աշակերտներն և աշակերտութիւններն վեց դասակարգի բաժնել ըստ տասնիւնի յառաջագիմութեան։ Աւսուցիչն մի դասակարգի հետ զգալի ժամանակ միաններուն պարտաւոր է գործ կը յանձնէ և այսպէս կարող կը լինի թէ՛ զգալիցնել և թէ՛ իւրաքանչիւր դասակարգերուն դասհարցնել և դաս աւանդել։ Տասներկուերորդ տարւոյն մէջ հարցոյթնութիւն կը լինի, որով կ'որոշուի թէ՛ տղեօք մանուկն կարող է Կրկնութեան զըսքոցն փոխադրուիլ, թէ՛ տակաւին պէտք է մնայ Իսկական կամ Երական դպրոցին մէջ։

Նախնական դպրոցին մէջ կրօնական ուսումն դաստիարակն կ'աւանդէ, իսկ Կրկնութեան դպրոցին մէջ հովիւն կամ քահանայն։

Դպրոցական վճարքն նախնական դպրոցի համար տարին 3 ֆրանկ է, իսկ Կրկնութեան դպրոցին համար՝ 1 ֆրանկ 50 սանթիմ։ Աղքատ մանկանց համար բարեգործական պաշտօնատուներն կը վճարեն։

Ամեն մանկունք պէտք է որ զըսք

րոցական վճարքն հասուցանեն, թէ և իրենք մասնաւոր դպրոցներ յաճախեն։ Ոչ մի մանուկ գործի մէջ չ'ընդունուիլ, եթէ կանոնաւոր ուսումն առած եւ աւարտական քննութիւն տուած չէ։

Աւսուցչի թոշակն կը բաղկանայ աշակերտաց դպրոցական վճարքէն, Ժողովրդապետութենէն որոշուած 200 ֆրանկէն, բնակարանէ, չափաւոր գետնով հանդերձ, վառելափայտէ, և Տէրութեան յաւելուածոյ վճարումէն, որով թոշակն մինչեւ 700 ֆրանկի կը հասնի։ Տասներեք տարի ուսուցչութենէն զինի վերագիր կը լինի 100 ֆրանկ, իսկ քսան և հինգ տարիէն ըզկընի 300 ֆրանկ։

Դպրոցական ծախքերն Ժողովրդապետութեան վերայ է։ Ամեն Ժողովրդապետութիւն (commune) ունի դրամագլուխ, որոյ գումարն կը հաւնի 6 միլիօն ֆրանկի։ Այս դրամագլուխ եկամուտին հետ կը միանան տուգանքներն, ամուսնութեան պարգեւներն (առ'նուազն 5 ֆր.), կտակեալ և կաւմաւոր պարգեւներն, ամեն եկեղեցեաց դրամաժողովութեան տարեկան արդիւնքն, հասարակութե (commune) մէջ բնակութիւն հաստատուելու իրաւանց համար վճարած տուրքն և այլն և այլն։ Եթէ այս եւս բաւական չըլլի, հասարակութիւնն ուրիշ միջոցներ ձեռք կ'առնու եւ երբեք իւր դպրոցի բարեկարգութիւնն չըխանգարեր։

Երկրորդական դպրոցներու (Secundarschulen) նպատակն է այն գիտութիւններն կամ ուսմունքներն դրացնել, զոր աշակերտք ուսած են նախնական դպրոցներու մէջ, առանց երբեք Ժողովրդային կրթութեան սահմանէն անցնելու։ Նախնական դպրոցաց մէջ աւանդուած ուսմանց վերայ երկրորդական դպրոցներուն մէջ կը

յաւելնան — անդաշտախոթ թիւն եւ շի-
նակն անտեսագիտութիւն եւ երբեմն
մի օտար լեզու : Աւսումն ուսումնեան
չըմանն է երեք տարի , դպրոցական
վճարքն է 24 ֆրանկ ամեն աշակեր-
տի կողմէն :

Յիւրիխ Նահանգի մէջ 59 երկրորդ
դասիան դպրոցներ կան, 87 ուսուցիչներ
բով, 2,313 աշակերտներով, յորոց 1,659
աղջիկք եւ 654 աղջկուհիք (1) :

Աշխատութեան կամ ձեռագոր-
ծութեան դպրոցներն (Arbeitschulen)
չաբախն երկու կէս — օր , վեց ժամ,
կը յաճախեն աշակերտողք : Այս դրու-
թոյններն հաստատուած են ձեռա-
գործներ ուսուցանելու աղջկանց , Յիւ-
րիխի լճի եզերքը , Վիւսնախտի մէջ,
կայ ուսուցչական դպրոց , ուր կը յա-
ճախեն հարիւրէն աւելի աշակերտք :
Բացի Տիօրէն—Տեսչէն , կան տասն ու-
սուցիչք եւ ծախք կը լինի 43,000 ֆր.
ի տարին : Այս դպրոցէն կ'եննեն նախ-
նական դպրոցաց ուսուցիչներ , որով
Յիւրիխ Նահանգն կը հաւատարմի Սաբ-
անիստին եւ Վիւրտեմբերգին :

Դպրոցական շէնքերն ընդհանրա-
պէս շատ բաւ չինուած են եւ ամեն կու-
րեւոր պիտոյքներ ունին : Այս նկատ-
մամբ նշանաւոր է Վենթերթուր , որ
մի փոքրիկ քաղաք է եւ ունի 5,000 բը-
նակիչ : Վենթերթուր կը թաւթեան հա-
մար կառուցած է երեք սրահաններ , ու-
րոց իւրաքանչիւրին համար , առ նը-
ւաղն , 800,000 ֆրանկ ծախք եղած
է : Բաց ի նախնական դպրոցներէն ,
ունի մի բարձր դպրոց (Gymnasium)

տրուեստական դպրոց , միջին դպրոց
եւ մի բարձր վարժարան աղջկանց հա-
մար :

Յիւրիխ ունի իւր հոյակապ հա-
մալարանն (Université) եւ բազմաբ-
ուեստեան դպրոցն (Polytechnicum) :
Զուիցերիայ մէջ գտնուած սրահանե-
րն ուսման նուիրած են :

Նախնական ուսմանց համար եղած
ծախքն կը հասնի միւս կէս միլիօն ֆրան-
կի , մարդապլուխ 5 ֆրանկէն աւելի :
Վէս միլիօնն Նահանգն , եւ մի միլիօնն
հաստատակութիւններն (Communes) կը
վճարեն :

Յիւրիխ ունի նմանապէս եւ կտրե-
րու դպրոց , ուր թէ ուսմանքներ
կ'ուսանին եւ թէ ձեռագործներ :

Սակայն այս եւս պէտք է ասել , որ
բուն Զուիցերիայի օրիորդներն հա-
մալարան եւ բազմաբուեստեան դրու-
թոյն չեն յաճախեր , այլ յաճախոյնե-
րն օտար երկրէ եկաւորներ են եւ
գլխաւորապէս Ռուսաստանէն , որոնք
աւելի բժշկութեան սիրահար են , եւ
այն եւս Ռուսիոյ Տէրութիւնն , զա-
նազան նկատումներով , անցած տարի
հրաման հանեց , որ կամ վերագառնան
կամ Յիւրիխէն հեռանան , յորոց ու-
մանք վերագարձան , ամանք ցրուեցան ,
եւ շատ սակաւք մնացին , Ռուսիա չը
վերագառնալու պայմանաւ :

Մեր ճանապարհորդութեան ժա-
մանակ շոգեկառաց կայարաններուն
մէջ անշտեղ հանդիպեցանք այն
ցրուած օրիորդաց ոմանց , որոնք պա-
յուսակներն առած Յիւրիխէն ուրիշ
քաղաքներ կը չուէին , տրտունջ յայտ-
նելով Ռուսիոյ կառավարութեան գէմ,
որ տարապայման կասկածներ ունի ի-
րենց վերայ , իբր թէ , փոխանակ ուս-
ման , անդարոյական կեանք կը վարեն ,
մինչդեռ քաղաքագիտական թաքուն
գաղանկին այն էր , որ իբր թէ հան-

(1) Մեր տուած բոլոր տեղեկութիւններն 1872
թուականին նկատմամբ են , ի հարկէ այն տարիներն
ի վեր ժողովոյալին կը թաւթեան աւելի յառաջ
գնացած է . վասն ի զրեթէ ամեն տարի յառաջա-
գիտման մեծամեծ եւ նորանոր վախճանութիւններ
լը լինին :

բաւարական գրութեան ընտելանալով
և իրենց հայրենիքն վերադառնալով՝
կարեն վրդովել իրենց երկրի միասե-
տական անգործութիւնն :

« Այն , Էլէօնորա , կ'ասէր մի
Ռուս օրիորդ իւր ընկերուհւոյն (եր-
կամազուց մէջ) , սիրտս կը կծկի ,
երբ կը մտածեմ որ Ռուսաստանին
մէջ մեր անունն իբրեւ անբարոյա-
կան կը հռչակուի եւ այս ճանա-
պարհաւ ամեն աստղաբէզ մեր առջեւ
կը փակուի : Եթէ այս տեղ մնամք
միշտ , մեր հայրենեաց և ծնողաց կա-
րօտով պիտի պրօւիմք , եթէ վերա-
դառնամք անգործ և տրտում պիտի
լծաւամբմք : Դու գիտես արգէն , թէ
ի՞նչ մեծ հակողութիւն կայ Զուիցերիոյ
մէջ բարոյականի մասին . գիտես ար-
գէն , որ Ռուսաստանէն նոր եկած
ժամանակ մինչեւ անգամ Պօլիցիական
կառավարութենէն ազգարարութիւն
եղաւ մէզ , որ մեր ռուսական սիգար
ծխելու սովորութիւնն թաղուեք եւ
գոյթակողութիւն չը տանք Զուիցերի-
ոյ կանանց և օրիորդաց : Բայց ի՞նչ օ-
գուտ , որ դարձեալ մեր անունն ան-
բարոյական կը հռչակուի , մինչդեռ
Ռուսաստանի կանանց կեանքն Զուի-
ցերիոյ կանանց կեանքէն այնչափ ստոր
է , որ ամեն խորհելով աչքէս արտա-
սուքներ կը հոսին : Այսպէս կը վար-
ձատրէ ահա մեր հայրենիքն մեր այս-
քան տարուան աշխատութիւնն եւ
պանդխտութեան մէջ վտրած անմե-
ղութեամբ զուարթ կեանքն » :

Զուիցերիոյ մէջ նախնական ու-
սումն այնչափ հրապարակ և հռչակ ունի
որ համբաւաւոր Անգլիան անգամ բազ-
մաթիւ մանուկներ կը զրկէ ի Զուիցե-
րիոյ , որոնք նախնական ուսումն ա-
ւարտելով՝ կը վերադառնան իրենց
հայրենիքն եւ այն տեղ՝ ցանկացողք
բարձրագոյն դպրոցներն կամ համալ-

սարաններն կը մտնեն :

Յիւրիխէն յետոյ մեր ընտրած երկ-
րորդ Նահանգն է Նեւշաթէ , որ ունի
87,369 բնակիչ , յորոց 77,095 բողոքա-
կան են : Ըստ վիճակագրութեան 1865
թուականի ունի 303 դպրոցներ , 136
ուսուցիչներ և 169 ուսուցչուհիներ :
Դպրոցական չէնքերն հոյակապ և գե-
ղապատշաճ են : Ծախքն երկու և կէս
միլիօն : Աշտեկրտաց և աշակերտու-
հեաց թիւն 16,405 :

Դպրոցական սահմանադրութիւնն
գրեթէ համանման է Յիւրիխ նահան-
գի սահմանադրութեան :

Յիւրիխ և Նեւշաթէ նահանգնե-
րու վերայ տուած տեղեկութիւններն
բաւական կը համարիմք մեր ընթեր-
ցողաց , թողով Զուիցերիոյ միւս 23
Նահանգներն , որոց մէջ համանման
ընթեր և ծախքեր կը լինին ժողովրդա-
յին կրթութեան համար , և յառաջ
կը բերեմք Պ . Էրնէստ Նաւիլի խօս-
քերն , զորս կը գրէր իւր մի բարեկա-
մին Ժընեւի Նահանգի նկատմամբ .
« Խիստ հաղուագիւտ են մեր Նա-
հանգի մէջ այն մանուկներն , որոնք
բնաւ կրթութիւն առած չեն : Ամե-
նեւին չեմ յիշեր , որ երբէք սրտաւ
հաճ լինիմ , թէ քաղաքի և թէ գիւղի
մէջ , մի ժեննեւիոյի մարդոյ կամ կնոջ ,
որ կարգաւ և գրել չիմանայ : Ես ժե-
նեւիցի կ'ըստորագրուիմ , որովհետեւ
քանի մի ժամանակէն ի վեր օտարա-
կաններ չատ կը յաճախեն մեր Նա-
հանգն , որոնք ընդհանրապէս զուրկ
են կրթութենէ » :

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Տ. Ներսիսի Ամենապատիւ Պատրիարքի Կ. Պոլսոյ :

Տէւրք երեւոյթանք Հայոց .

Յամենազօրն Աստուած և 'ի ձեր ազգասիրութիւնն ապաստան՝ լի յուսով կը բանամ այսօր Աղգ . ժողովը , մաղթելով որ ձեր փորձառութեամբ և ջանիւք , օրինապահութեամբ և միաբան ազգասիրութեամբ արդիւնաւորագոյն լինի ներկայ չոյսն :

Աղգային գործերն Վարչութեան համարատուութիւն ձեզ պիտի յայտնուին , ձեր իմաստութեամբն պիտի կշռէք և գնահատէք զանոնք :

Այժմէն կարող եմ ըսել թէ յարաբերութեանց և ժողովոց կանոնաւորութեան և գործոց կարգադրութեան համար՝ ոչ ձեր կողմանէ և ոչ մեր ու ժողովոց և խորհրդոց կողմանէ աշխատութիւն և ջանք չպակսեցան : Գաւառացի ազգայնոց կալուածական խնդիրներն որ մեր նախորդներէն ժառանգած էինք , Բ. Գրան մատուցուելով յուսադրիչ խոստումներ տրուեցան : Բազումք 'ի կուսակալաց մեր մը տերմական գրութիւններն ուշադրութեան առնելով բաւական գործեր կատարել բարեհաճեցան :

Աղգային ելեմուտքն , շնորհիւ երկու բարերարաց որ հին պարտքը վեճարեցին եւ զորս ձեր շնորհակալութեան քուէովը մեծարեցիք , շնորհիւ ձեր քուէարկած հանգանակութեան օրինաց , նա մանաւանդ շնորհիւ ամեն աղգայնոց , երբ ըստ օրինաց փութան իրենց պարտքը կատարել , յուսամ որ գոհացուցիչ վիճակ մը կ'առնու : Ձեզ ներկայանալի տարեկան պիւտճէովն

պիտի աւանդէք զայս և ըստ այնմ դատէք :

Տեսրք Երեսփոխանք , խորին և երախտագիտական շնորհակալութիւն կը մատուցանեմ Ձեզ և ինձ գործակից ժողովոց և խորհրդոց՝ այն վստահութեան համար որով պատուեցիք զիս դուք և նոքա . զի գիտեմ որ ես աւնարժան էի ատոր . քանզի իմ պակասութիւններս և սխալներս ամենէն աւելի ինձ յայտնի են : Աղգը գոհ ընելու համար աշխատելու կամք չպակսիր ինձմէ , բայց գլխուսդ բան մը կը պակսի , առանց որոյ անկարելի է յարաւերութեամբ գործել ընդ ծանր պատասխանատուութեամբ , այն է կատարեալ առողջութիւն :

Անցեալ տարի այս օրերս էր զիս Պատրիարք ընտրեցիք . աղուցցի ըզ Ձեզ որ արժանաւորագոյն մը բարձրացրնէք այս աթոռին վրայ . չուղեցիք լսել և ես հնազանդութեան փորձը ցուցի : Այսօր իրաւունք ունիմ թախանձագին պաղատել Ձեզ , բաւական համարեցէք և հաճեցէք փութով ուրիշ մ'ընտրելու փոխանակ իմ . ես պատրաստ եմ իբր մին 'ի վարդապետաց ազգիս իմովսանն ծառայել ինչ պէս յառաջ :

Պատրիարքն ազգին ամենէն զօրաւոր գործին պէտք է ըլլայ . ես մաշած գործիք մ'եմ , առողջ միտք յառողջ մարմնի , կրտէ հին առածը :

Ճշմարտն ըսելով՝ զլուխս թմրած է և մտաց կորով չէ մնացած 'ի յիս . քանզի ամեն ատեններէ աւելի փափուկ է այս ժամանակս , ուստի և մեծ ու հզօր հանճարով գլխու և յոյժ լայն ու զիմացիուն սրտի գործ է ներկայ Պատրիարքութիւնը . զայս կանխաւ գիտէի , կրգգամ և այսօր , բայց ոյժ չունիմ տոկալու . արիութիւն , համբերութիւն , եռանդեան զոպումն ,

շրջա՛յ պեցութիւն , յորաժամ արթնութիւն , ի ժամու և ստորաժամու վսգիտութիւն , կրակի վրայ շիջուցանող ջուր , անկենդանութեան վրայ բորբոքիչ հուր , լոյս , հոգի , սէր , խաղաղութիւն , ծեր , տղայ , գեղ , դարման , միսթարութիւն , օրինակ բարեաց , միտք բանիւ ամենայն ինչ է Պատրիարքը :

Ուրեմն կը խնդրեմ և կը պաղաւտիմ , ընտրեցէք արժանաւորագոյն մի որ գոնէ փոքր ի շատէ այս հանգամանքներն ունենայ :

Զի մեք պարտիմք անդու անգաղ որ բայց լուրջ և հանգարտ կերպով աշխտող յառաջ դիմելու : Քիտնալու եմք որ անհուն պիտոյք ունիմք լցնելու : մեր բարոյական մտաւորական և նիւթական վիճակաց բարեութեան տեւալ զոհողութեանց պէտք ունի : Մէք եկեղեցիներ , դպրոցներ , հիւանդանոցներ ունիմք , սակայն մեր այս ազգային հաստատութիւնք մեծամեծ բարեկարգութեանց և անոնց ապահովութիւնքն մեծ ջանից կարօտ են :

Ուսումը տարածելու համար մեծամեծ ջանքեր ընելու եմք , զի տակաւին սպիտութիւնը իւր անբաժանելի ընկեր թշուառութեամբ մեծամեծ նախճիրներ կը գործէ շատ տեղեր և գրեթէ ամեն տեղ : Ազգային դաստիարակութիւնն իւր խանձարոց մէջն է տակաւին թէ և ուսումնարաններ ունիմք : Եկեղեցականաց բարեկարգութիւնն եւ նուիրապետական դասակարգութիւնը որ հոգին է եկեղեցականութեան , տակաւին մեծ ճշգրանց կը կարօտին , թէ և ուսեալ , բարեկիրթ , լեզուագէտ և սրբակրօն եկեղեցականներ ունիմք :

Ունիմք ազգային Սահմանադրութիւն , օրինաւորապէս ըստ Սահմանադրութեան ընտրեալ ժողովներ ,

Գաւառական ժողովներ , Կրօնական Քաղաքական ժողովներ , Ուսումնական , Տնտեսական , Ելեմտից խորհուրդներ և այլն , թէ՛ այս տեղ և թէ՛ գաւառներն , բայց դեռ բեղմնաւոր արդիւնքներ տեսնելէ բաւական հեռի եմք :

Ունիմք , փառք Աստուծոյ , ողորմած դրամատէրեր , հարուստ և վեհանձն վաճառականներ , հանճարաւոր և սղփին պատիւ բերող անհատներ , ստկայն անհամար ընտանիք , երիտաւոր գանձիմք , թէ՛ աստ և թէ՛ ի գաւառս , անգործութեամբ և նորա հետեւանք գառն աղքատութեամբ կը տուայտին , և դեռ չեմք կարողացած ընկերութիւններ , գործարաններ , արհեստանոցներ կազմել , կանգնել , որպէս զի դործ և կեանք մոտակարարեմք այդ տառապելոյ , Թէ և պէտք չէ մոռնալ որ այս տարուան սովէն նեղեալներուն ոչ ստկաւ նպաստամտոյց եղան վեհանձն ազգայինք , ժամանակիս բերմունքն և ապագային պահանջ մունքը խիստ շատ են : Պէտք չէ յաւակնիմք թէ մեր պարտքերն կատարած եմք , զի ամենուս ըրածն մէկտեղելով անհուն պիտոյից հետ բաղդատմամբ սննչան և աննշմարելի բան մը կը գտնեմք : Սակայն և ոչ ներելի է պղերգութեամբ եւ յուսահատութեամբ ձեռնթափ լինել . անդադար աշխատելու եմք , բայց խոհեմութեամբ , և գիտնալու եմք որ ամեն բան իսկոյն միատեղ չեմք կրնար կատարել , բարձր դիրքէ մը ազգային ընդարձակածաւալ անմշակ դաշտը տեսնել մէկ ակնթարթի մէջ կարելի է , սակայն հոն արշաւել , քննել , մշակել , անոր ժեռուտ , քարուտ , մացառուտ , ճախճախուտ տեղերն արգաւանդահող ընելն հարկաւ կատարելագոյն գործիքներու , ապահով

ժողովներու, բողոքաբանաց և երկա-
րատեւ ժամանակաց կը կարօտի, քան
զի գիտէք թէ տրձակ ընդարձակ չէ
մեր ընթացած ճանապարհը, թէ ի՞նչ
տրգելքներ, քանի՞ քանի՞ զօրաւոր շա-
հերու ընդհարումներ և այգ սաստիկ
ընդհարումներէն ինչ փշուրելու վը-
տանքներ կան հոն, ուստի մեր գոր-
ծը կանոնաւոր յարաւելութեամբ և
ոչ յախուռն աճապարանօք յառաջ
վարելու եմք:

Գիտէք որ անհամար վեքեր ու-
նիմք բռնելու և ասանց գէժ անհա-
մար տեղատիտն սպեղանիք, օտիւյն գի-
տէք նաև որ ասանցմ, ազգողագոյնը
որոշակն է գործը, զի այս երկիրը՝ մա-
նուսնգ տեսականին ու գործնական
նին մէջ՝ անհուն սարքերութիւն կայ,
հասու գործիքին՝ ազգողագոյն գեղին
ընտաւթիւնը գործոյ և փորձոյ տը-
գիւնք պիտի լինի, իմ գլխաւոր մէկ
երկիւղ, առ է որ չըլլայ թէ ի խնդիր
լուսաւունքին՝ լաւը կրօնցնեմք: Մեր
ծրագիրը կամ յոտակապիւր պէտք է
լինի անտաւանքի փափայ միշտ դէպ
ի յառաջդիմութիւն, իրական վազ-
վազիտ և խիզախ յանգագութենէ և
մեռելատիպ թմրութենէ միանգամայն
հաւասարապէս հեռանալ, ասանց մը
խորի ժամ առ ժամ դէպ ի լաւագոյ-
նը նկատիլ: Մեր ազգին քաղաքակա-
նութիւնն այսպէս կը հասկնամ, զգու-
շաւոր չընհայեաց, խոհեմ արիւն-
թիւն, ձեռքերնիս ունեցածնիս վրայ
չտալով նոր վտատակի ետեւ է ըլլալ,
միշտ գործել առաւել քան թէ խօսիլ,
և ներկային աննպատակ գրգռութիւն
նէրէն խուսելով ապագայն չմեռցնել,
հրազայր իղձերն անտեսել, հասարա-
կաց ուղղախոհ կարծիք, թուիք տա-
րածել, զի այն բաներն զորս մէք չեմք
կարող այսօր յորդիւնս ածել, հասա-
րակաց բան ախորութիւնը լուսաւո-

րութեամբ կարող է որ մը հրաշտիւրտել,
մեր սերտ միութեամբն մեր մէջ ազ-
գային ուղին անթափանցելի և անխու-
ցիկ պահել քաջքս համայն փափաւկ
պտուղի մը պէս, որ խիտ և կարծր
կեղեւով շուրջ պատեալ անվթար կը
մնայ արտաքին փոփոխական օգոյ ազ-
գեցութենէն:

Այժմ հասկցած էք գուք, տեսիք
Երեսփոխանք, որ մեր այս պահպանա-
կը, ուղեցոյցը, և այլն, շնորհիւ Սա-
մանեան պետութեան մեր ազգային
Սահմանադրութիւնն է պատշաճ վը-
րաքննութեամբ հանդերձ:

Յոնուրեմն ժամ է արգ, նոր Պատ-
րիարքի ընտրութեան հետ Ձեր օրա-
կարգին մէջ էն ծերագոյն և Ձեր նոր
չըջանին մէջ էն կարեւոր և առաջին
գառուած խնդիրն լուծեցէք, անեւրե-
վի է այլ եւս յապագեցնիլ սորա լու-
ծումը, այս հնգետասանամեայ փորձը
և Ձեր գիււանին վրայ դառնուած շատ
մը գիտողութիւններ եւ ծրագիրներ
զՁեզ լուսաւորելով շուտով վախճան
պիտի տայք անշուշտ այս գործոյն,
հարկ չէ ըսել թէ կանոնը որչափ պար-
զութիւն ստանայ, այնչափ աւելի
գիւրդնուել կըլլայ:

Պէտք է որ համոզուելով վճռէք
թէ գաւառներու և նոյն խոկ Պաշտոյ
մէջ Գործադիր Ժողովներն ու Տեսուչ
խորհուրդներն սակաւաթիւ անձնիք-
ներէ բաղկացած ըլլան, և Գործադիր
խիւանութեան միավիճակ ուստեալ նա-
խագահին արտօնութիւն տայք ան-
գործադրելի կէտերն իսկոյն վերաբերե-
նութեան ենթարկելու:

Տեսի՛ք Երեսփոխանք:

Հայոց Ժողովոյ բոլոր յայտը Ձեր վրայ
դրած է, ամեն բան իր Պատրիարքէն,
Ձեզնէ և Սահմանադրութենէն կ'ապա-
ւե, ծանր է ձեր և մանաւանդ Պատ-

րի ու թիւն պատասխանատուութիւնը ,
 և ծանրագոյն պիտի ըլլայ , եթէ իրաց
 ժիւծակն ընդ փայծ ՚ի նկատի չառնուի ,
 եթէ գրեթէ միահաղթն նոր ուխտ մը
 չընէք նոր ոգւով գործելու . զի եթէ
 Սահմանադրութիւնն ալ փոխեմք ու
 մեք զմեզ չփոխեմք , այսինքն նոր սգի ,
 նոր գործունէութիւն , հաստատուն
 կամք չ'առնեմք , հազուադէպ միայն
 փոխելով ինքզինք. քաղաքակիրթ համա-
 ըրող մարդոց նմանաձ կրցումք :

Ձեր երկրորդ և յոյժ կարեւորու-
 գոյն և մահու և կենաց խնդիրն ազ-
 գային դատարարակութիւնն է . Սահ-
 մանադրութեան բարիքը պէտք է փայ-
 լեցնել , թաղական վարժարաններն և
 անոնց մատարարութիւններն բար-
 է որելով , պիւտձէն ընդարձակելով ,
 կեդրոնական վարժարան հաստատելով
 ուսմանց ճրագիրները կատարելագոր-
 ծելով , և գաղափարները միացնելու
 համար դատարարակութիւնը միակեր-
 պելով , նոր երկսեռ նախակրթարա-
 ներ , նոր երկրորդական վարժարաններ
 բազմացուցանելով , զի այդ դպրոցնե-
 րն պիտի բուսցնեն մեզ բարեկիրթ
 ծնելասէր մայրեր , եկեղեցւոյ արժա-
 նաւորագոյն պաշտօնեայնէր , ազգային
 ժողովոց արթուն և ազգասէր անդա-
 մակիցներ , և լուսամիտ գործունեայ
 և պատուական և իւր գործը շինող
 ժողովուրդ :

Երբ այսպէս բարեկարգ դպրոցներ ,
 բարեկարգ վանքեր , վարժապետանոց-
 ներ , արհեստանոցներ և այլն ունե-
 նամք , երբ ազգին և տէրութեան պի-
 տանի քաղաքացիներ սկսին ելնել մեր
 դպրոցներէն , այն ատեն Սահմանադ-
 րութիւնը մեռեալ տառ մը չմնալով
 իւր արգիւնքը յուցուած և տէրու-
 թեան ու ազգին մէկ խիստ պատուա-
 կան օրինակիքն եղած կըլլայ : Ձեր
 անունն ալ ասորոց սերնդէն օրհ-

նաւելով կ'օրհնուի սակեղէն տառերով
 գրուած ելով մեր պատմութեան մէջ :

Երեսփոխան Տէմիր :

Պէտք է յիշէք նաեւ որ այսօր՝ հին
 գեղատառանկայ Սահմանադրութեան
 տարեգարծի տմոյս երկրորդ օրն՝ այս
 ժողովոյս բացման ատեն՝ այս հանդի-
 սաւոր վայրկենիս՝ մեր ամենուս պարտ-
 քնն է բարեբաւոտիկ երկայն աւուրս
 մաղթել մեր Օգոստոսիառ կայսեր , ո-
 րոյ հովանաւորութեամբ մեր կրօնը
 կը պաշտեմք , մեր լեզուն կը մշակեմք ,
 մեր տղայքն ազգային ոգւով կը կրթ-
 թեմք ու եկեղեցւոյ և ազգային գոր-
 ծերը կը վարեմք ըստ Սահմանադրու-
 թեան : Գլխաւորն փհայեալայ հո-
 վանին բարիք մը եղած է մեր ազգին .
 կեցցէ՛ ուրեմն մեր Օգոստոսիառ ինք
 նախին Սուլթան Աստիւլ Ազիզ խան :

Վերջացնելով խօսքս , զՁեզ , Տէաքք
 Երեսփոխանք , Աստուածային պաշտ-
 պանութեան կը յանձնեմ , մաղթելով
 որ իմաստութիւն հօր Յիսուս բանն Աս-
 տուծոյ հաճեցի վարել ձեր բանավա-
 րութիւնը յուզիլն և օգտակարն , և
 Հոգին Սուրբ , հոգի սիրոյ , հանձարոյ ,
 խորհրդոյ և միութեան , սաւառնե-
 լով ձեր մտաց վրայ , տածէ և լուսա-
 ւորէ Ձեր խորհուրդներն այժմ և միշտ
 և յաւիտեանս ամէն :

ՄԻՐԶԱՅ ԱՌ ՄԱՍԻՍ

Ո՛վ Մասիս , Մասիս , դու ինձ էդպէս
 Սիպտակ ¹ գլուխդ սեւ քողով ծածկել ես ,
 Սգաւոր կնիան ² նման սուգ նստած
 Դիշեր ցերեկ անմխիթար լալիս ես :
Ինձ էդքան ո՛հ , գոռում ես գոչում ,
 Լալով , ողբալով աշխարհ խրաովում ,
 Դարերով աչացդ լցօրն մեթայնում
 Հարայ , մագանթ ³ միշտ էդ ո՛ւմ ես կանչում :
Փանք Աստուծոյ , Դրախտ ունիս ծոցումդ ,
 Նոյեան տապանն էդ բարձր , ծեր գլխումդ ,
 Էջմիածինն աջ , Իւջբիլիսէն ձախումդ ,
 Բարթողիմէոս , Թադէոս կրճնակումդ :
Արագած , Սեպուհ , Սիփան վեհ սարերն ,
 Պատած են քո ամեն կողմերն
 Եփրատ , Տիգրիս , Փիսոյն , Արաքս գետերն
 Ողողում են քո աննման հողերն :
Դեռ շէն են դիւղ ու քաղաքներիդ
 Սուրբ աթոռներիդ , պայծառ վանքերդ
 Արթուն հայրապետք , միր վարդապետներիդ
 Դեռ մայրենի դրկում զաւակ ու թոռներիդ :
Իլ ի՛նչ է քո ցաւն , թագուհի Մասիս ,
 Հերկք էդքան լսս , սգաս , ու կոծիս ,
 Դէ արի իմ սիրտըն մի կտորի ,
 Սեւ շորերդ փոխիր , որ դէմքդ ծիծալի :
Զմեռն անցաւ , Մասիս , Մարտն հետը ,
 Մայիսն եկն կարմիր վարդն հետը ,
 Մարդ , անասուն ողջ ուրախ են ,
 Ինձ քո դէմքն միայն տխուր են :
Իմ քաջ Մասիս , զարդ Հայաստանի ,
 Արի բեզ մատաղ , էլ դարա ⁴ մի անի ,
 Աստուած դթած է , ողորմութիւն կ'անի ,
 Այս յուսով կ'ապրի ՄԻՐԶԱՅ պատանի :

1. Սիպտակ — սպիտակ . 2. կնիակ — կնիւշ . 3. Հարայ , մագանթ — յոգնութիւն
 հասէք . 4. Դարա — հայ , ցաւ :

ՄԱՍԻՍ ԱՌ ՄԻՐԶԱՅ

- ԳՆԱ՛**, անշարժ թնիլ, ազնիւ պատանեակ,
 Քո Մասիսի սեւ քնարն ողբերդակ,
 Մի՛ շարժեր սրտիս սգաւոր թելերն,
 Որպէս զի չըլեա տխուր եղանակ.
 Էլ քո Արարատ ի՛նչպէս սուգ չ'անի,
 Երբ իւր Հայաստան էս հալում տեսնի:
- Ա՛ն**, Միրզայ, Միրզայ, սիրուն պատանի,
 Մուսայդ երգարան՝ խելո՛ճ Հայաստանի,
 Յաւերս բիւրաւոր, վիշտերս դարաւոր.
 Այրի թագուհիս մայր Հայաստանի.
 Էլ քո Արարատ ի՛նչպէս սուգ չ'անի,
 Երբ իւր Հայաստան էս հալում տեսնի:
- Ո՛ւր է** իմ թագըն, ո՛ւր իմ գաւազան,
 Ո՛ւր իմ թագաւոր, ո՛ւր գահ անստան,
 Ո՛ւր որդիք, թուռնք, ո՛ւր իմ քաջազունք,
 Ո՛ւր իմ ծիրանի, զարդեր զանազան.
 Էլ քո Արարատ ի՛նչպէս կոծ չ'անի,
 Երբ իւր Հայաստան էս հալում տեսնի:
- Խոզեր** պղծեցին իմ ծոցի դրախտը,
 Օտաբբ քաղեցին պարտիղիս վարդը,
 Ա՛ն, վարդի կարօտ պիւլպիւլ մնացի,
 Նենգեցին դրացիքս, մոռցաւ զիս բախտը.
 Էլ քո Արարատ ի՛նչպէս կոծ չ'անի,
 Երբ իբր խելո՛ճ պիւլպիւլ անվարդ միշտ կայրի,
- Սեպուհ**, Արաբած, Սիսիան խելո՛ճ սարերն
 Են իմ արիւնոտ թշուառ կողերն,
 Եփրատ, Տիգրիս, Փիսոյն, Արաքս գետերն
 Են աչբիցս վազող պղտոր ջուրերն.
 Էլ քո Արարատ ի՛նչպէս սուգ չ'անի,
 Երբ իւր շրջապատն էս հալում տեսնի:
- Է՛ս** փառքն ունէին գիւղ ու քաղաքներս,
 Սուրբ Աթոռներս, աննման վանքերս,
 Է՛սպէս հայրապետք, Է՛սպէս վարդապետք,
 Է՛սպէս ցիր ու ցան դաւակ ու թուռներս.
 Էլ քո Արարատ ի՛նչպէս սուգ չ'անի,
 Երբ իւր Հայաստան էս հալում տեսնի:

Ես մեծ վերք ունիմ վեց հարիւր տարուան ,
 Որ միշտ մնում են անբոյժ , անդարման ,
 Սեւս ինչպէս փոխեմ , սիրուն Միրզաջան ,
 Առանց իմ սրտի ներքին խնդութեան ,
 Էլ քո խեղճ Մասիս ինչպէս ծիծաղի ,
 Մինչ անբուժելի շատ վերքեր ունի :

Իմ Մայիսն անցաւ վարդ , միխակն հետը ,
 Զիւն , ձմեռ եկին մշտապէս Մարտն հետը
 Փախան լալադին իմ անտէր թռռներ ,
 Իմ սիրան էլ տարան , ախ , կրանց հետը ,
 Էլ քո խեղճ Մասիս ինչպէս ծիծաղի ,
 Մինչդեռ իւր թռռներն թշուառ կը տեսնի :

Ուր իմ Հայկազուն , բաջայալթ արքայք
 Ուր Զարմայր , Տիգրան , Հայկ եւ Արմենակ ,
 Ուր Խոսրով , Տրդատ , ուր Վաչէ , Արշակ ,
 Ուր Վահագն , Գագիկ , եւ ուր Վաղարշակ ,
 Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,
 Երբ իւր Հայաստան անտէր կը տեսնի :

Ուր իմ զօրավարք յաղթող , ախպեան ,
 Ուր Վարդան , Տաճատ վեհ Մամիկոնեան ,
 Ուր Խորեն , Մուշեղ , Արտակ , Հմայեակ ,
 Ուր Սուրէն , Սմբատ եւ հուժկուն Վահան ,
 Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,
 Երբ իւր զօրավարք ննջած կը տեսնի :

Ոհ , կար ժամանակ իմ մեծ Տէրութեան ,
 Որով սարսուժ էին Տէրութիւնք համայն ,
 (« Զայն տունք գնդին Ասքանաղեան ,
 Թագաւորութեանն Արարատեան ») ,
 Գոչում էր յերկնից բարձր ձայն Աստուծոյ ,
 Մահ սպառնալով Ազրին Տիտանեան ,
 Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,
 Երբ Հայկայ երկիրն անտէր կը տեսնի :

Ոչ որ չէ կարող խրմել իմ բաժակ ,
 Քանզի դառն է յոյժ զերթ լեզի խառնակ ,
 Ոչ որ չէ կարող տոկալ իմ ցաւոց ,
 Սոսկում կը նիւթէ նոցայն խիտ ճաշակ ,
 Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,
 Որ ցաւոց լեզի մրուրքն կը քամի :

Ինչ են , Միրզայ , վերք , ցաւք , կսկիճք Յովբայ ,
 Անթիւ , անսահման ցաւոց մօտ Մաստայ ,
 Յովն փոքր ինչ յետոյ կորուսածն գտաւ ,
 Իսկ իմն յախտեան անգիւտ կը մընայ ,

Եւ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,
 Երբ էսպէս անգիւտ , մեծ կորուստ ունի :
 Բարէ , ինչ են ողբ , սուգ Երեմիայ ,
 Անբաւ ողբոց մօտ խեղճ Արարատայ ,
 Ինչ կարճ գերութիւն զուական Յուդայ ,
 Անկերջ գերութեանց մօտ Թուանց Հայկայ :
 Եւ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,
 Երբ իւր զաւակներ միշտ գերի տեսնի :

Վասն զի ազատիչք Հրեկոյ աղգին ,
 Իրանց հետ պատրաստ , անբաժան կային ,
 Մովսէս իբր ատուած Փարաւոնի մօտ ,
 Եսթեր Թագուհին Արտաշեսի մօտ :
 Սուրբ Եղեկիա Տաճարին միջում ,
 Եւ մեծ Դանիէլ Բաղդասարի մօտ :

Իսկ մասնիչք իբր ցեց անբաժան յաղգիս ,
 Բարէ , Գաբիայ մօտ լիբբ վեսան Սարգիս ,
 Սուրբ Սահակի մօտ չար էրեցն Սիւրմակ ,
 Քաջ Վարդանի մօտ Սիւնին Վասակ ,
 Մեծն Ներսիսի մօտ Պապ Թունաւորիչ ,
 Վեհ Սմբատի մօտ նենգող Մեհրուտան ,
 Աշտարակեցւոյն մօտ Գիրսաս զաւաճան :
 Եւ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,
 Երբ իւր ծոցում իժ օձեր կը տեսնի :

Զորս անգամ մեռաւ նենգ մարդոց ձեռք ,
 Զորս անգամ յարեաւ քաջ անձանց ձեռք ,
 Հօր Տէրութիւնս , ախ , հոգին փչեց ,
 Վերջին անգամ , մհ , վատ մարդոց ձեռք :
 Եւ քո Արարատ ինչպէս չի կոծի ,
 Երբ իւր տէրութեան Թշուառ մահն տեսնի :

Երբ իմ զաւակներ օտար հողերում ,
 Մասին , Հայաստան կանչում , ախ , քաջում ,
 Աչքերն պղտորում , սրտերն խորովում ,
 Զեռքերն խաչ անում , հողիքն տւանդում :
 Եւ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի ,
 Երբ իւր զաւակներ էս հալում տեսնի :

Բայց Միղզայ , երբ Աստուած ողորմի ,
 Եւ իմ նախնի փառք ու պատիւ նորոգի ,
 Ոհ , այն ժամանակ քո Մասիս սարըն
 Մեծ ուրախութեամբ սեւերն կը փոխի ,
 Եւ քո Արարատ միթէ սուգ կանի ,
 Երբ իւր Հայաստան նորոգւած տեսնի :

Ո . Գ . Բ .

ՔՆՆՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱՆԻՍԻԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՊԻԱՊԵՏԻ (ԴՕԲ
ՏՈՐԻ) ԱՍՏԻՃԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Քաղաքացիական Ռուսաց
ԴՕԼՕՍ (Զայն) ԸՄԳՐԷՆ :

« Պետրբուրգի Համալսարանի և Ակադեմիայի Եկեղեցական Պատմութեան ուսուցիչ Պ. Ի. Տրոյիցկի, Ապրիլի 27 ին, Կիրակի օրն, Ակադեմիայի մէջ պաշտպանեց վարդապետութեան ստորձան ստանալու համար գրած իւր քննական աշխատասիրութիւնն, որ ունէր այսպիսի վերնագիր. « Բայաբո-րի-ն Դաւանդ-իւն Հայաստանեայց Եկեղեցւոյ, զոր գրեաց Ներէա Շնորհալի ի խնդրոյ Կիւ Մանդիւր Կայսեր Յոռնայ : — Պատմական և վարդապետական հետազոտութիւն յաղագս Վիտրոյանեայ Եկեղեցւոյ Հայոց ընդ Եկեղեցւոյն Ռուսաց » :

Աստուածաբանութեան վարդապետի աստիճանի հետամուտ հեղինակն իւր գրուածքին ներածութեան մէջ ցոյց տալով Հայոց Եկեղեցւոյ Ռուսականին հետ միացնելու միջոցներն, որոնք իրարմէ կը տարբերին ոչ միայն ծիսիւ, այլ եւ վարդապետութեամբ, յառաջ բերաւ ինչ ինչ տեսական վարդապետութիւններ և ջանաց բացատրել Հայոց Եկեղեցւոյ խոտորման սրտաճառներն Ռուսականէն և միանալու հնարքներն :

Հայաստան լինելով երկու հզոր տերութեանց մէջ — Յունականին եւ Պարսկականին — մեծ նշանակութիւն ունէր իւր Եկեղեցւոյ բաժանումն Յունականէն : Հայաստան պաշտպանելով իւր կրօնական շահն ընդդէմ պաշտպան Պարսից, մի և նոյն ժամանակ պարտաւորուած էր պաշտպանել իւր

ազգային շահն ընդդէմ Բիւզանդիական կայսերութեան, Հայաստան չը կամենալով քաղաքականապէս հպատակիլ Բիւզանդիոնի ազգեցութեան, բռնաբարոյց նորա դէմ ըստ կրօնականին և խոտորեցաւ ի կողմն միաբնակաց, որք հալածանք կը կրէին Բիւզանդիոնի մէջ : Ահա այս պատճառաւ, որչափ որ փորձ փորձուեցաւ Հայոց Եկեղեցին Յունականին հետ միացնել, աւելն փորձեր ի դերեւ ելին, որովհետեւ ազգային և քաղաքական շահերն միշտ կրօնականին հետ կը խառնուէին :

Այս ազգային և քաղաքական դժուարութեանց բարձումէն կախեալ է միութեան դժբոյն յաջող կատարածքն : Եւ ահա Հայոց Եկեղեցին Ռուսականին հետ միացնելու համար պէտք է ազգայինն և ժողովրդայինն թողուլ և լուի եկեղեցական խնդիր նկատել : Աւելի լաւ կը լինի այն կէտին հասցընել խնդիրն, որ Հայք ճանաչելով Ռուսական ուղղափառութենէն խոտորելու նշանակութիւնն և վնասն, ինքնին կարօտին և ստիպուին միանալու, առանց արտաքին ազդեցութեանց :

Վարդապետութեան աստիճանի հետամուտ հեղինակի սոյն խօսքերուն նկատմամբ դիտողութիւններ եղան Իսիդոր Մետրապոլիտի կողմէն, որ կը նախագահէր քննական մրցման ատենին :

Տրոյիցկու պաշտօնական քննիչնէրէն կամ ընդդիմաբաներէն առաջինն Պ. Զելցով, գրուածքին երկրորդ մասը ընդունեց իբրեւ ամենայն մասամբ կատարեալ, ուր յառառաջ բերուած էին այնպիսի պատմական յիշատակարաններ, որոնք իբրեւ ձեռագիր անձանօթ մնացած էին Մոսկուայի Սիւնդական մատենադարանին մէջ : Իսկ առաջին մասին համար Պ. Զել-

ցով յայտնեց, որ արեւմտեան գիտնականաց ազդեցութեամբ և հետեւողութեամբ գրուած է, այն է Նորվեգացի Կասպարի և Գերմանացի Բաուրի, որոց սխալներն կրկնուած են Տըրոյիցիու աշխատասիրութեան մէջ, Օրինակի համար, ինչպէս Կասպարի, նոյնպէս և Տըրոյիցիի Հայոց Հաւատոյ Հանգանակն, զոր Ռուսերէն թարգմանած է Յովսէփ Արքեպիսկոպոսն, Նիկիական չեն ընդունիր, իբրեւ գործ Մեծին Աթանասի, այլ կը համարին իբրեւ Նիկիականին վերայ յերիւրուած բան մի։ Սակայն սխալ է սոսկործիքն, վասն զի Հայոց Հանգանակն այնչափ Նիկիական է, որչափ եւ Ռուսացն, ՚ի բաց առեալ միաբնութեան տարրն։ Մանաւանդ որ Նիկիական Հանգանակ տեսելով ոչ թէ այն կ'իմացուի, զոր կարգացին և ստորագրեցին Հարբ առաջին տիեզերական ժողովոյ (որ է Հանգանակ Կեսարիոյ եկեղեցւոյն) այլ կ'իմացուի ամեն Հանգանակ, որ կազմուած է Նիկիական Հանգանակի հոգւով և որ համաձայն է առաջին տիեզերական ժողովոյ վարդապետական ուսման։ Կասպարի կարծիքն սխալ է նաեւ Հայոց Հանգանակի ծագման ժամանակին նկատմամբ։

Պ. Չեչուով բոլորովին դիւանական և բառական գտաւ Պ. Տըրոյիցիու համեմատական աշխատութիւնն, որով բաղդատած և իրար խառնած էր զանազան Հանգանակներն։ Իսկ յերկուց բնութեանց և յերկուս բնութեան խօսքերն, զոր համիմաստ բացատրած էր Տըրոյիցիի, հերքեց Պ. Չեչուով, յայտնելով որ նոյնիմաստ չեն, ինչպէս որ Հայք եւս առաջինն կ'ընդունին, բայց երկրորդն ոչ, հարկաւ տարբերութիւն նշմարելով։

Պ. Չեչուով ընդդէմ Տըրոյիցիու՝ երկարօրէն բացատրեց նմանապէս, որ

միաբնութեան հերետիկոսութիւնն Եւտիքեսէն չէ սկսուած, այլ առաջուց, քանզի հերետիկոսութիւններն դարերով կը շարունակին և ապա ձեւ կ'ընտանան։ Եւտիքեսի ժամանակ միայն ձեւ ստացաւ նոյն հերետիկոսութիւնն և ոչ թէ նոր սկսաւ։

Պ. Տըրոյիցիի ընդդէմ Չեչուովի ջանաց պտշտպանել իւր գրուածքի առաջին մասն, յայտնելով որ ամենէն շատ զայն մշակած է և երբէք ենթադրուած չէ Արեւելեան գիտնականաց ազդեցութեան։

Պ. Չեչուով նկատողութեան տոնրւով Պ. Տըրոյիցիու գրուածքի երկրորդ մասն՝ յայտնեց թէ՛ Հայոց Եկեղեցին Ռուսականին հետ միացնելու համար ամենեւին հարկ չը կայ Հայերն հրաւիրել, որ համաձայնին վարդապետութեամբ և ծիսիւ։ Քրիստոնէութեան մէջ առաջին պայմանն է հոգւով և ճշմարտութեամբ երկրպագութիւնն, իսկ ծէսն ամենեւին կարեւորութիւն չունի, այլ կարող է փոփոխիլ ՚ի զանազան ժամանակս և ՚ի տեղիս։ Եւ երբ Պ. Տըրոյիցիի սրտասխառնեց թէ՛ Հայոց ծէսերն սերտ կապակցութիւն ունին իրենց սխալ վարդապետութեան հետ և գրեթէ իրենց վարդապետական մտքութեանց ցլմունքներն են, Պ. Չեչուով դիտեց, թէ բաղումը ՚ի Հայոց՝ վարդապետական ուսումներն ամենեւին չեն միացնէր ծէսից եւ արարողութեանց հետ։ Իւր խօսքն հաստատելու համար, ՚ի միջի ալոյց, յառաջ բերաւ՝ թէ Հայք առանձին չեն տօներ Յիսուսի Քրիստոսի Մոլունդն։ Կ'ասեն թէ՛ Հայոց Եկեղեցին կը մերժէ սոյն Տօնն և որպէս թէ չը հաւատարմարմնաւորութեան Բանին Աստուծոյ։ Սակայն այսպէս չէ։ Մինչեւ 380 թուականն ամենեւին Մոլունդեան տօն չը կար Արեւելքի մէջ։

Սրբադասի տեսութիւնն կամ գաղա-
փորն տախտակն կը թագաւորէր Արեւ-
ելքի մէջ և կորեւոր չէր համարուեր
տօնել Յիսուսի Քրիստոսի Մեղանքն, որ
կատարուած էր անցյալութեան մէջ,
այլ արժանի կը դատուէր տօնել միայն
փառաւոր Աստուածայայտնութիւնքի
յԱրեւմուտս, որովհետեւ ճննգեան
օրերն տօնելու հնաւանդ սովորութիւն
կար, այն սովորութեան հետեւու-
թեամբ տօնուեցաւ և Յիսուսի Քրիս-
տոսի Մեղանքն և այն տեղէն տարածե-
ցաւ յԱրեւելս:

Սակայն Հայոց Եկեղեցին իւր նախ-
նական Արեւելեան սովորութիւնն
պահպանելով Յիսուսի Քրիստոսի Մե-
ղանքն աւանձին չը տօնէր, այլ Մը-
կրտութեան և Աստուածայայտնու-
թեան տօնին հետ միասին:

Պ. Տրոյիցի կ'սկսէ իւր կարծեաց
վերայ թէ Հայոց վարդապետական մե-
լորութիւնն ցոյցացած է արարողութե-
մէջ եւս, ինչպէս յայտ է Սուրբ Աս-
տուծ երգի որ խաչցաւ յաւելուածէն,
որ Հայոց Ռիբն-Լիւն դաւանելու ի-
մասուն կ'արտայայտէ:

Ի վերջոյ Պ. Չելցով գիտեց, որ Պ.
Տրոյիցիու գրուածքին մէջ զիջողա-
կան աստղածններ կան ընդդէմ Հա-
յոց Եկեղեցւոյն, որ յարգանաց ար-
ժանի Եկեղեցի է և պահպանած է Հու-
ւատոյ Հանգանակն և նախնական ծե-
սեր: Իսկ Տրոյիցիու գրածներն 'ի մե-
սին ազգայնութեան և քաղաքականու-
թեան բոլորովն անհիմն գտաւ, բա-
ցատրելով որ քաղաքականութիւնն մի-
այն վերջին ժամանակներս սկսաւ մեծ
դէր խաղալ ազգաց կենաց մէջ և մինչ
չեւ անգամ կրօնքն եւս իրեն դարձիք
չինել: Իսկ նախնի դարուց մէջ կրօնա-
կան շահերն անկասկէն և հաւատն
իւր ինքնակոյ նշանակութիւնն ունէր
մարդկանց կենաց համար, աղտոտ բա-

ւրովն քաղաքական շարժ ստիճանքէ:

Պ. Տրոյիցիու պաշտօնական երկ-
րորդ ընդդիմաբանն էր Պ. Նիկոլի,
որ յայտնեց թէ ամեն բան հանգամա-
նօրէն և լրիւ գրուած չէ Հայոց Եկեղե-
ցւոյն նկատմամբ, օրինակի համար, յի-
շուած չէ թէ ինչպիսի Նիկոն Չերնոպե-
րեց դաշն կուզէր կապել Հայոց հետ
կրկնակրտուք ռուսական ուղղափառ
Եկեղեցւոյն հետ միացնելու համար:
Սրաւ է այն տեղեկութիւնն, որ Պ.
Տրոյիցի կը պատմէ թէ Թէոդոս Պե-
չերսկին հայարնակ թագերու մէջ կը
չըջէր և նոցա հետ կը խօսակցէր, վասն
զի Թէոդոս, ոչ թէ Հայոց, այլ Հրէից
հետ կը խօսակցէր: Անհիմն է այն տե-
սութիւնն, զոր Պ. Տրոյիցի յառաջ
կը բերէ 'ի կողմանէ Կիսրիանոս Մեա-
րապօլիտին, որ Հայոց հերիտիկոսու-
թիւնն ամեն հերիտիկոսութիւններէ
վատթարագոյն կը դասէ, յետոյ յայտ-
նեց, որ Ժ. Գ. դարու Ռուսական մի յիշա-
տակարանի մէջ շատ մանրամասնու-
թիւններ կան Հայոց ծիսից նկատմամբ,
զորն եթէ Պ. Տրոյիցի ուշագրութեան
սուած լինէր, աւելի բան կարող էր
բաղել:

Պ. Նիկոլի ընդդէմ Տրոյիցիու
յայտնեց՝ որ անհիմն է այն դատողու-
թիւնն, իբր թէ Հայք մի մասով
խաչակիքելով Ռիբն-Լիւն դաւանել
կ'ուզեն ցոյց տալ. վասն զի Ռուսա-
կան հերձուածներուն մէջ եւս մի մա-
սով խաչակիքելու սովորութիւն կայ, որ
մի բնութիւն դաւանելու գիտմամբ չէ:

Մինչդեռ վիճաբանութիւնն կը շա-
րունակուէր, մի Հայազգի եւս, իբրեւ
անուղղակի ընդդիմաբան, յայտնեց
որ Պ. Տրոյիցիու գրուածքին մէջ զե-
տեղուած Հայոց դաւանութեան ռու-
սական թարգմանութիւնն ուղիղ չէ:
Իսկ Պ. Տրոյիցի պատասխանեց թե-
րեւ թարգմանութիւնն համաձայն

չը լինի հայկական այժմեան բնագրին , բայց ըստ ամենայնի համաձայն է ժԲ գարու մէջ գրուած Հայոց Հաւատոյ դաւանութեան յիշատակարանին , (Ներսէս Շնորհաւրց Ընդհանրականն կ'անկարկէ) : Իսկ Պ . Չեչով յարեց , Հայագի պարսկին դիտողութիւնն այն ժամանակ կրնդունուի , եթէ աղաքացուի որ Հայոց այժմեան կարգացած գաւառութիւնն հաւատաբար գոյն և ետեւագոյն է ժԲ գարուն մէջ գրուածէն :

Ամենէն վերջն խօսեցաւ Վառլիլեւի աւտգ. քահանայն , չը համաձայնէ լով Պ . Տրոյիցիու այն կարծիքին թէ ուղղակի պէտք է առաջարկել Հայոց , որ միանան Ռուսաց Եկեղեցւոյն : Առաջարկել պէտք չէ , ասաց քահանայն , բայց ձեռք կ'սրկառել և օգնել պէտք է : Այս է ճանապարհն : Յետոյ ուղեց խօսիչ Քրիստոսի բնութեան և անձնաւորութեան վերայ , բայց խօսքն ընդհատեցաւ :

Թէ առաջին երկու ընդգիմաբանից խօսքերն և թէ Պ . Տրոյիցիու պատասխաններն կը ծափահարուէին : Պ . Տրոյիցիի շատ համառօտ կը պատասխանէր , բայց շատ մեղմ և ցած ձայնիւ , որ ամենուն լսելի չէր լինիր :

Վերջացաւ մրցումն և Պ . Տրոյիցիի արժանի դատուեցաւ աստուածաբանութեան վարդապետի աստիճանի » : ԳՕԼՕՍ :

Հայոց Եկեղեցւոյ միութեան խընդրոյն վերայ առաջ Յունաց աստուածաբաններն գլուխ կը պայթեցնէին դարերով : Այժմ , ինչպէս կ'երեւի , այս ժառանգութիւնն Ռուսաց աստուածաբաններուն անցած է , թէեւ Յոյք եւս իրենց նախահարց երազներու կատարման յուսով , միութեան խնդրոյն վերայ խօսելու պատեհ առիթներն չեն թողար : Գիտ

նական Ռուս մի աստուածաբանութեան վարդապետի աստիճան կը փափաքի ստանալ , Հայոց դաւանութեան քննութեամբ կրնաի իւր աշխատասիրութիւնն և երկուց եկեղեցւոյ միութեան խնդրով կ'աւարտէ : Աստուածաբանական խնդրոյ դաշտէն շուտով քաղաքական խնդրոյ դաշտն կ'ընկնէ : Իւր էսքիքներն , թէ և ընդգիմաբաններ կ'ունենան , բայց կը ծափահարուին ակադեմիական կաճառէն : Աստուածաբանական քննութիւն և Հայոց Եկեղեցւոյ միութեան խնդիր , ինչ յարակցութիւնն իրարու հետ : Այս , աստուածաբանութեան վարդապետի աստիճան ստանալու համար , կարելի է Հայոց Եկեղեցւոյ դաւանութիւնն եւ վարդապետութիւնն ինքն ընտրել , բայց այս մասին Հայոց բոլոր գրաւոր երկասիրութիւնքն , թէ տպեալ և թէ անտպ , ծածկու , մարսելու և ապա ասպարէզ ելնելու է : Անհայագէտ Ռուս մի ինչպէս կ'արդէ խղճիւ կատարել այս փափուկ պաշտօնն , քանի որ հաստակաւոր և թերի թարգմանութիւններէ ու յունական մոլեռանդութենէ տարածուած անըտոյգ տեղեկութիւններէ զատ՝ ուրիշ ուղեցոյց չ'ունի Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութեան , վարդապետութեան , աւանդութեանց և արտրողութեանց խորն թափանցելու համար : Բայց ինչ հարկ կայ այսչափ խոր թափանցելու , քանի որ միայն եկեղեցւոյ միութեան խնդիրն յուղելով կարելի է աստուածաբանութեան դժուորի աստիճան ստանալ Ռուսական Ակադեմիայի մէջ , քանի որ բիւրաւոր անգամ կրկնուած բնութեան , խաւցարի , ծննդեան փոխ և այլ խնդիրներն բրբրելով կարելի է հանձար փայլեցնել և ծափահարուիլ : Կերեւի թէ , ով որ Հայոց Եկեղեցին Ռուսականին հետ մի

այնքան զիւրիւն և մօտաւոր ճանապարհներ ցոյց տայ, կարող է աստուածաբանութեան վարդապետի վերայագիր ստանալ : Այսպիսի վկայագիրներ անտարակոյս Ռուսոյ քաղաքագէտներն աւելի շուտով կարեն ստանալ քան թէ Ակադեմիայի անդամներն :

Մենք կը կործէինք թէ միայն քաղաքականութիւն մթնոլորտին մէջ կը յուզուի միութիւն այս խնդիրն, բայց գրեթէ անհաշիւ Ռուսոյ քաղաքական տեսնալիստութեան բեմն ելած է : Զարմանալի է, որ Հայոց հովիւներու քննարկած ժամանակ Ռուսոյ աստուածաբաններն կը մտածեն նոցա հօտի փրկութեան համար, զոր մի միայն միութեան մէջ կը տեսնեն, այն միութեան, որոյ ոլորտուն արդէն կը վայելեն Վրացիք, կամաց կամաց կորուստեցող իրենց ազգայնութիւնն ու լեզուն :

Այն, ինչ սոսկալի բան է, երբ ազգաց դաւանութիւններն քաղաքական միտումներու գործիք դարձնել կը ջանան, երբ չեն թողուր կայսերն՝ կայսեր տալ եւ Աստուծոյն՝ Աստուծոյ, այլ կը նկրտին երկուսն եւս կայսեր տալ, բայց ինչքան առաւել սոսկալի է, երբ տակաւին ազգեր կան, որ իրենց կեանքն կը բարձուի և իրենք քննարկած են յիմարութեան, անձնամոռութեան և անքաղաքագիտութեան խոր քնով :

Պ. Տրոյիցկու և իւր ընդդիմանկոյ ոմանց Հայոց Եկեղեցւոյն նկատմամբ ունեցած սխալ հասկացողութեան դէմ կարելի էր ընդարձակօրէն խօսիլ, բայց աւելորդ կը համարուի, վասն զի միջնադարեան կրօնական վէճեր յարուցանելու փափաք չունիմք : Հայք հերետիկոս են թէ ուղղադաւան, այդ վէճին ևս մեր Եկեղեցւոյ թշնամիներէն չեմք սպասեր, Եւ ինչպէս կարեմք սպասել, քանի որ մեր Եկեղեցին դաւ

դաժնեւորներն խաչակնքող մատներու քանակութենէն անգամ հերետիկոսութիւն և ուղղափառութիւն կը հանեն և այնչափ հմտութիւն ունին մեր Եկեղեցւոյ վարդապետութեան և աւարտողութեանց վերայ, որ տակաւին չգիտեն թէ մի մատով կը խաչակրն քեն Հայք, թէ երեք :

Այս ամեն իմաստակութիւններն ծնունդ են այն բռնն եռանդին, այն անբուն տքնութեան, որով Հայոց Եկեղեցին միայնել կը տենչան, և միացունելով՝ գոյութիւնն ջնջել եկեղեցեաց շարքէն :

Ափսոս, որ Քրիստոնէութիւնն տալ կաւին այս վիճակին մէջ է : Ափսոս, որ տակաւին իրենց մերձաւորի ողորման հետամուտներն կը համարին՝ թէ պաշտօն կը մատուցանեն Աստուծոյ :

Կ Ռ Ի Ի

Ի Լ Ե Ա Ռ Ն Զ Ի Թ Ե Ն Ե Ա Յ

Ս. Համբարձման Տօնն Հայք եւ Յոյք միասին կը կատարեն Զիթենեաց սարին վերայ : Առաջին օրն իւրաքանչիւր ազգ յատուկ վրան և սեղան կը պատրաստէ յաջորդ աւուր պատարագին համար, իսկ ժամերգութիւնն նոյն դիշերն կը կատարուի : Ի վաղուց անտի սովորութիւն կայ, որ Հայք Օրհնութեան շարականն փոքրիկ մատրան մէջ կ'երգեն և Աւետարան կը կարդան : Յոյք եւս ազատ են իրենց կարգին որ և իցէ բան կարգաւոր, վասն զի Մատուռն թէ և Տաճկաց ձեռքն է, բայց Տօնական աւուրց մէջ Քրիստոնէից կը տրուի :

Այս տարի, երբ մեր Միաբաններն Օրհնութեան շարականի ժամանակ կ'ուզեն հանդիսիւ Մատուռն մտնել եւ մեր սովորական արորողութիւնն կատարել, Յոյնք կը դիմագրեն և չեն թողուր ներս մտնելու։ Մեր Միաբաններն որչափ կը քանան համազել, որ յետ կենան Յոյնք սոյն հախառակութենէն, ամենեւին իրենց ձայնն լսելի չը լինիր։ Ի վերջոյ մերայինք տեսնելով, որ կատարեալ բռնաբարութիւն է Յունաց վարմունքն եւ սոյն խափանումն խաղառ սնապատուութիւն մեր կրօնական արարողութեան, կ'ըստի պուն ներս մղուել, կարծելով թէ Յոյնք տեղի կը տան։ Սակայն Յոյնք կը սկսին յարձակիլ մեր յառաջնութաց Միաբանից վերայ եւ հարուածներ տալ։ Մեր Միաբաններն տեսնելով թէ սոյն դիմագրութիւնն առաջուց խորհուած և պատրաստուած է, և ու մանք փայտեր անգամ կը կրեն իրենց վերայ, կը սկսին փոխադարձ հարուածներ տալ դիմագրողներուն։ Կռիւն կը սաստկանայ, Յոյնք բազմութիւ, մօտ երկու հարիւր հոգի, իսկ մերայինք հազիւ թէ քսան հոգի։ Յունաց բազմութիւնն բազկացած կը լինի ոչ թէ վանուց Միաբաններէն, այլ քաղաքի Արաբ քահանաներէն և ժողովրդէն, յորոց շատերն, թերեւս դիտմամբ, արբեալք և ոգելից ըմպելեօք արիաքեալք, ընդհակառակն մեր քաղաքացի ազգայիններէն ամենեւին մարդ չը գտնուիր։

Կռիւն և գանակոծութիւնն բաւական ժամանակ տուելէն զինի կը խաղաղին առ վայր մի, մարդ կը զբոսի և Կուսակալի կողմէն հազարապետն կը գայ զօրականներով հանդերձ։ Այս միջոցին մեր վանքին եւս լուրն հասած լինելով՝ Միաբաններէն շատերն կը փութան յօգնութիւն եղբարց, որք

՚ի լեռոն Ս. Համբարձման։ Մերայինք կ'առաջարկեն հազարապետին, որ մեր սովորական արարողութիւնն անպատճառ պէտք է կատարուի, ինչպէս աւան մերն տարի կատարուած է։ Հազարապետն կը պատասխանէ թէ ինքն եկած է միայն խաղաղութիւնն պահպանելու համար, իսկ արարողութեանց կատարուելուն կարող չէ միջամտել։ Ինչ արարողութիւն ունին Քրիստոնեայք կարեն կատարել, միայն թէ առանց կռուոյ և շփոթութեան։ Այս ժամանակ մեր Միաբանք հանդիսիւ մատուռն կը մտնեն և Յոյնք բնաւ չեն դիմադրեր։

Այսպէս կը վերջանայ այս տխուր իրողութիւնն և լուսնալով՝ իւրաքանչիւր ազգաց պատարագներն կը սկսին իրենց յատուկ վրաններուն տակ եւ ամենայն խաղաղութեամբ կ'աւարտին։

Զարմանալին այս է, որ դիմագրողներն Յոյնք, իրաւունք բռնաբարողներն Յոյնք, վրդովմունք պատճառողներն Յոյնք, բազմութիւն Յոյնք, և դարձեալ Յոյնք երկիցս հեռագրով բողբոքած են ՚ի Ռ. Գունն, որպէս թէ Հայոց Միաբանութենէն յանիրաւի ծեծ կերած և վիրաւորուած են։ Ահա առեղծուած, յորում նենգութիւն եւ ցածութիւն միանգամայն կը տեսնուին։

Դամասկոսէն հետեւեալն զբոլուած է Միսի միջոցաւ հրատարակելու։

Հայկազնեան Բնիկութիւնն Դամասկոսի, Բաղէպէտ Դ. հարիւր յիսուն Բաժանորդաց, Կիսեալ Դ. 1 էն Մարտի 1875 թի։

Պայմանք եւ Կանոնք Բնիկութեան

1. Բնիկութեան նպատակն է յօժարութեամբ դրամ հաւաքել և ՚ի

ժամանակին տրահովապէս շահեցնելը

2. Ընկերութեան անդամ գրուողը պէտք է նախ մէկ անգամ (մէկ բաժինի համար) Օսմ. քառորդ ոսկի վճարէ, և շաբաթականն ալ քառասուն և հինգ փարսյ անձամբ հաւարչին վճարէ մինչև երեք տարի. և ամեն մէկ տարի տարեգլխոյն դարձեալ մէկ մէկ քառորդ ոսկի պէտք է վճարէ շաբաթականները դարձեալ շարունակելով. իսկ ով որ մինչև չորս շաբաթ չը վճարէ պէտք է դայն հրաժարած սեպելով անունը Ընկերութենէն ջնջել:

3. Իգական սեռէն ալ կրնան բաժանորդ գրուիլ, բայց քուէ տալու իրաւունք չունին:

4. Եթէ մէկը հիւանդութեան պատճառաւ չը կարենայ իր շաբաթականները վճարել, անոր կը ներուի. մինչև այն ատեն, որ կը յուսալուի վճարել անցեալ և ներկայ շաբաթականները. բայց թէ որ բոլորովին անկարող դառնուի ապացոյցներով, մինչև այն ատեն դրած բաժինը կ'առնէ առանց շահու՝ անունը ջնջելով. բայց թէ որ ուրիշ տալ ուղէ իւր բաժինը և Ընկերութիւնը վստահ ըլլալով նոյն փոխանորդին վարուց եւ կարողութեան վրայ հաճի, կրնայ ընդունուիլ:

5. Եթէ ժամանակ անցնելէն վերջ ընկերութեան անդամ գրուիլ ուղղը ըլլայ, պէտք է նախ Ընդհանուրին հաճութեամբը. և ապա մէկ Օսմ. քառորդ ոսկին վճարելէն վերջ, Ընկերութեան սկսելէն մինչև այն ատեն՝ անցեալ շաբաթականները և իր բաժինին շահն ալ վճարէ, և ապա ընկերաց կարգը անցնի:

6. Ընկերութեան մէջ եթէ անուղիշտ և խռովարար մէկը գտնուի, Ընկերութիւնը իրաւունք ունի զանի առաջին և երկրորդ անգամ խրատել.

եթէ չուղղուի, Ընկերութենէն պիտի մերժուի. առաջին տարին՝ հարիւրին 30. երկրորդին հարիւրին 60. և երրորդին՝ բոլորովին ամբողջ տուածը Ընկերութեան թողլով:

7. Ընկերութեան մէջէն եթէ մէկը վախճանի, անոր բաժինը որդւոյն կամ ժառանգին կ'իյնայ, որն որ կրնայ իբրեւ ընկեր շարունակել. բայց եթէ ժառանգը անկարող կամ փոքր ըլլայ՝ մինչև երեք տարի Ընկերութիւնը աւոր տեղ բաժինը կը վճարէ, և անկէ վերջը կամ ամբողջ դրամը շահով մէկ տեղ իրեն կը տրուի, և կամ լոկ շահ. բայց դարձեալ կրնայ անձին և ժամանակին համեմատ խոհեմութեամբ տնօրինուիլ. և եթէ ժառանգ չունենայ՝ Ընկերութեան կը մնայ:

8. Ընկերութիւնը պէտք է ժողով մը ունենայ իր մէջէն քուէով ընտրուած բանիրուն եօթը անձերէ բաղկացեալ, սոյն անձերէն պէտք է ընտրուի ընդհանուրին քուէով, Տեսուչ, Փանձապետ, Պրագիր եւ Հաւաքիչ, աւ Տնօրէն ժողով, որոնք մէկտեղ ընկերութեան գործերը բարեկարգելով տնօրինեն. իսկ եթէ ասոնցմէ մէկը իւր պաշտօնին մէջ թերութիւն ունենայ առաջին և երկրորդ անգամ ներելի է. բայց երրորդին պէտք է ուրիշը ընտրել Տեսչին ազդեցութեամբ և Ընդհանուրին քուէով:

9. Տեսչի պարտքն է Ընկերութեան բոլոր գործերուն հսկել և պէտք եղած ատեն ժողով գումարել:

10. Փանձապետի պարտքն է հաւաքուած ստակին հսկել Տեսչին եւ Պրագիրին հետ մէկտեղ:

11. Պրագրին պաշտօնն է Ընկերութեանն ելից եւ մտից վերայ հսկել Տեսչին և Փանձապետին հետ, և տօմարը արձանագրել. և ամեն երեք ամիսը անգամ մը հաշիւ ներկայացնել ընկե-

րութեան . կանխիկ ազդարարութիւն տալով , և ամիսը անգամըն ալ Տնօրէն ժողովին :

12. Հաւաքչին պաշտօնն է ամեն շաբաթ իրեն յանձնուած կէքեալ սօմ սերը Ընկերութեան բաժնել շաբաթականները ընդունելով , եւ եղած գումարը գանձապետին յանձնել :

13. Ընկ. Ընդհանուր ժողով մը ալ ունի , որ կը բաղկանայ բոլոր անդամներէն , որոյ պաշտօնն է որոշեալ ժամանակին հաշիւ պահանջել գործակալներէն , և եթէ Տնօրէն ժողովին եւ գործակալներէն մէկը կասկածելի ըլլայ , զայն քննելէն և անուգելէն վերջ պէտք է իւր պաշտօնէն մերժել և ըստ արժանայն տուժել . և անոր տեղ ուրիշը ընտրել ընդհանուր քուէով :

14. Պայմանեալ ժամանակէն յառաջ մասնաւոր մէկը կարող է հաշիւ պահանջել , միայն թէ ուր որ դիտողութիւն մը ունի Տնօրէն ժողովոյն կը յայտնէ և Տնօրէն ժողովն Ընդհանուր ժողով գումարելու հոգ կը տանի . բայց թէ որ Ընկերութեան մեծագոյն մասը համաձայնի կրնայ ժամանակէն յառաջ Տնօրէն ժողովոյն ձեռք հաշիւը դիտողութեան առնուլ և պէտք եղածը անօրինել :

15. Տնօրէն ժողովը պարտաւոր է հաւաքուած դրամը (որչափ որ ըլլայ) շահեցնել . երբ շահու տրուի՝ պէտք է հաստատու և լծակից ստորագրութեամբ և կամ գրաւով տրուի . եթէ գրգռատաբար շահու տրուելիք դրամը կորսուի , պատասխանատուն Թողովը պիտի ըլլայ . եթէ Ընկերութեան բաժանորդ գրուողներէն մէկը շահով գրգռուողը ըլլայ , պէտք է ընկերութենէն դուրս հաստատու և լծակից երաշխաւորութեամբ կամ գրաւով տրուի . առանց այս երկու կէտին արտօնութիւն չըկայ երբեք մէկին ստակ

տալու բայց Տնօրէն ժողովն ստակ տալու միջոցէն գատ , ուրիշ որ և իցէ յարմար միջոցաւ ալ կրնայ դրամը շահեցնել , Տեսչին , Փանձապետին եւ Քրազրին հետ խորհելով :

16. Ընկերութիւնը պէտք է երկաթեայ արկղ մը ունենայ , ապահով տեղ դրուած , երեք տարբեր բանալիներով , հաւաքուած դրամը և մուրհակները անոր մէջ ամփոփելով , որուն բանալիները , մէկը Տեսչին , մէկը Փանձապետին և մէկն ալ Քրազրին քով պիտի մնայ :

17. Ընկերութիւնը պէտք է երեք կտորէ բաղկացեալ կնիք մը ունենայ , ամեն մէկ կտորը՝ արկղին բանալիները ունեցողներուն քով պէտք է ըլլայ , ուրով բաժանորդներուն բաժնի ամսները կը կնքուին :

18. Սոյն կանոնները ընդունողը՝ կրնայ ընկեր ըլլալ , և բոլոր ընկերք պէտք է որ ստորագրեն և Տեսչին քով պահուի :

19. Թէ որ ժամանակ անցնելով կանոններուն մէջ փոփոխութիւն ընել հարկ ըլլայ , երեք ամսեայ ժողովին մէջ պէտք է որոշուի եւ յաւելուածով մը ասոր տակը գրուի , զոր դարձեալ բոլոր անդամները ստորագրելու են :

20. Սահմանեալ ժամանակին պահինքն երեք տարի լրանալուն պէս , պէտք է եղած գումարը տօկոսով հանդերձ բաժանորդներուն բաժնել , և ամեն մէկ բաժանորդ իրեն բաժինը հանդերձ եղած շահով առնելէն վերջ , իրեն կամ մայր կը մնայ , եթէ կ'ուզէ դարձեալ Ընկերութեան անդամ մնալ և եթէ կ'ուզէ բաժանուիլ :



ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ Ի ՀՆԴԻԿՍ

Յետ քսան և ութ ամի համբարձման Տեառն յերկինս՝ Թովմաս վերջին ի հաւատացէլոց յարութեան նորա՝ եղեւ առաջին աւետարանիչ արքայութեանն ի հեռաւոր ծագս աշխարհին Հնդկաց։ Սկսեալ ի Պարսից և ի Բակտրոնէ քարոզեաց մինչեւ ի Դաքան, և անդ ի լեառն Մոնթ՝ եօթն մղնաւ հիւի ի Մագրոսոց հաստատեալ զաթոռն առաքելական՝ ձեռնադրեաց զբազումս յաշակերտաց իւրոց և սրինեաց զնոսս քարոզս աւետարանին ընդ ամենայն Հնդկաստան։

Թէպէտ և չիք առձեռն յիշատակութիւն սրբազան վատակոց նորա՝ ստկոյն և չիք և տարակոյս տարածելոյ նորա զհաւատս երկնաւոր վարդապետին ընդ ամենայն ողորտս վիճակի իւրում։ Զի ի ժողովն Նիկիոյ՝ սրբումարեցաւ յերրորդ դարուն՝ Եր և եւպիսկոպոսն Հնդկաց։ Եւ յամին հանդերձելոյ՝ Փրումէնթոս ձեռնադրեցաւ Ս. Թանասայ հայրապետ Հնդկաց։ Ի մէջն վիցերորդ դարուն եկն դարձեալ այլ ոմն Թովմաս կրօնաւոր, ծրուեալ ի կերպարանս վաճառականի, (զորոմանք համարին գոյ Հայ ազգաւ), և զբազումս ի նոցանէ դարձոց ի հաւատն Քրիստոսի։ Իսկ յաւուրս Յուստինոսի կայսեր, յորժամ հալածանք յարեան ընդդէմ Արեւելեան եկեղեցւոյ վասն ոչ ընդունելոյ նորա զԹովմէ Քաղկեդոնի, նախ զՆերսէս հայկազունի առաքեաց սպարապետ, եւ ապա զԲեկտարիոս՝ առ ի բռնութիւն անդ զնա յայն դաւանութիւն։ Վասն որոց ժողովեալ Դեոսկորոսի Ասորւոց հայրապետի զբազմութիւն յողդէ իւրմէ, և զեօթնեսին յաշակերտացն ձեռնադրեալ յերկրունս միախառնի չու աքարին ի ծովեղերս Արաբիոյ, և նա

ւարկեալ անտի՝ եկին հասին ի Քօչին՝ առ ծովեղերօքն Մալաբարոյ։ Ուր շինեալ եկեղեցիս բազմացան յոյժ, եւ կան մինչև յայսօր ժամանակի։ — Հայր Ստեփաննոս աշխարհագիր գրէ զսուցանէ, թէ « ի ժամանակս Թագաւորութեան Յունաց անհնարինս նեղեալ ի չարչարանաց և ի տառապանաց՝ որովք նեղէին զնոսս Յոյնք՝ սակս Քաղկեդոնի ժողովոյն, հատուած մի ի նուցանէ գնացին փախստական յաշխարհէն իւրեանց, և ճանապարհորդելով ընդ շաճս ի զանազան աշխարհս, զկնի հասին ի Քօչին »։ Հատ. Դ. 104։ Եւ եթէ ճշմարիտ իցէ գիւտ արձանին և գրութեան, զոր յիշատակէ անդ 261 և 262, թէ Օլօիէն ի Թաշինայ՝ այսինքն յԱսորւոց՝ էած ի Զին զօրէնս Քրիստոնէից յամի Փրիկին 636, ուրեմն խոստովանելի է, թէ Ասորիք ի հալածանս անդ իւրեանց՝ առաւել լուսափայլեցին զհաւատս երկնաւոր վարդապետին՝ քան եթէ մնացեալ էին խաղաղութեամբ անգործ յաշխարհի իւրեանց։ Ապա եկին ի Բաբելոնէ Յովհաննէս և Դանիէլ նետաորականք, և յետ նոցա այլք՝ մինչև յ1652, ուր Քրիգոր եպիսկոպոս Երուսաղէմի չորեքեալ քարոզութեամբ ընդ աշխարհն Եթովպիոյ մինչ ի Մուխա, եկն անդուստ ի Քօչին, և հաստատեաց զամենեսին ի դաւանութիւն Հայոց եւ Ասորւոց։ Սա գրեաց առ Մարդպանն Հայոց Մերութէն, որ նստէր ի Տիգրանակերտ, և նա առաքեաց ի Հրնգիկս զեպիսկոպոս մի Ասորի երկուքորեպիսկոպոսօք, որոց եկեալ ի Քօչին հովուեցին զեկեղեցին զամս հրնգեւտասան։ Ապա եկին Լատին քարուղիք և զբազումս մաքրեցուցին յազանգ պապապաշտութեան իւրեանց։ Եւ յամի տեառն 1744 հանդիպեցաւ նոցա առաջնորդ Նոր Զուղայ Տ. Դէորդ

եպիսկոպոս . այլ անտեղեակ լեզուի նույն՝ ոչ ինչ կարաց առնել . վասն ուրոյ գնաց և յամին 1743 առաքեաց առ նոստ զԱհարոն վարդապետ զայրն բանիքուն : Եկն ընդ այն աւուրս եպիսկոպոս մի Ասորի , այլ քանզի այր արբեցող էր՝ ոչ ընկալաւ զնա ազգն : Վերստին գրեցին ՚ի Տիգրանակերտ առ ազգն իւրեանց , և նոքա առաքեցին առ նոսա եպիսկոպոս մի Շուքրօլլա անուն երկու քորեպիսկոպոսք : Յամին 1750 եղեւ հերձուած ՚ի միջի նոցա , ոմանք յարեցան ՚ի կողմն արքեպիսկոպոսի իւրեանց՝ և ոմանք ՚ի կողմն Ահարոն վարդապետի . որք այնպէս հովուեցին զնոստ՝ մինչեւ մեռաւ Ահարոն : Իսկ յետագայ առաջնորդաց Նոր Զուղայ տնհոգացեալ փոխանորդել նմին զայլ հովիւ ՚ի վերայ հօտին՝ հալեցան ամենեքին և զսնգեցան յեկեղեցին ասորւոց :

Այլ առաւել քան զնոսա մեծ արարին վաճառականք ազգի մերոյ ըդ հաւատն Քրիստոսի ՚ի Հնդկաստան , որք բազմօք յառաջ քան զգալուստ եւրոպացւոց՝ շինեցին եկեղեցիս դրեալ թէ յամենայն վաճառաշահ քաղաքս Հնդկաց , և բարձր արարին զպաշտօն փառաց Ամենակալին ՚ի մէջ ամենայն հեթանոսաց :

Յետ նոցա ղեղան Փորթուգալք և կրօնաւորք նոցա՝ որպէս Սպանիացւոցն ՚ի Մէքսիկոն , ՚ի ձախ բարձին ըդ խաչ՝ և յաջ զսուսեր՝ բռնի ածել զնոսա ՚ի հաւատս իւրեանց : Զօրացան յետ նոցա Դանիք , Գաղղիացիք եւ Անգղիացիք , և զբազումս թէ ՚ի հաւատացելոյ և թէ յանհաւատից՝ որսացան եւ որսան ՚ի կողմն իւրեանց՝ առանց խորանաց :

Հատուած ինչ ազգիս իբրեւ երեսուն տանց ՚ի վաղեմի ժամանակաց հետէ բնակեալ ՚ի Քոբօլ՝ զամենայն

հոգեւորական պիտոյս իւր ընդունէր յառաջնորդէ Նոր Զուղայ՝ մինչև ցըկարապետ եպիսկոպոս : Ապա օտարոտի և տգէտ եպիսկոպոսաց փոխանորդեալ յաթոռ տեղւոյն , է որ անգիտութեամբ և է որ անհոգութեամբ ղանց արարին առաքել առ նոսա մատակարարս Աստուածային շնորհաց : Եւ անինտմ ժողովրդեանն զամս յորվս անկնունք պահելով զմանկունսն և անհաղորդ թաղելով զմեռեալս իւրեանց՝ սակաւին ամբողջ պահեցին զհաւատ հարց իւրեանց ցամ տեառն 1833 : Յորում յարշաւել զօրոյ Անգղիացւոց ՚ի Քարօլ յամբառնալ զՇահ՝ Սուլա յաթոռ իւր՝ պատահեալ քահանայի բանակին և հրաւիրեալ յեկեղեցին՝ մատուցեալ էին զառաւջեաւ նորա չափահաս մանկունս աւելի քան քսան թուով , մկրտել զնոսա : Գուցէ և դարձան իսկ ՚ի կրօնս նոցա : Զամա չիցէն արգեօք այսպիսի հովիւք , որք զանձինս և եթ արածեն , անփոյթ եղեալ զհօտիցն : (Պատմ . հին Հընդկաստանի Մետրոպ Ռ . Թաղիադ . Գլ . 5 եր . 220-225 տպեալ ՚ի Կալկաթա) :

ԺԱՄԱՆԱԿԱԿՐԱԿԱՆՔ

Ռուսաց Հիւպատոսն , Պ . Իօզէֆովիչ փոխուեցաւ եւ իւր տեղն եկաւ նախորդ Հիւպատոսն , Պ . Կաթեմիլիկով , որ Յունաց Կիրիլոս Պատրիարքի ջերմ պաշտպանն էր և նոյն Պատրիարքի դահլնկեցութենէն զինի՝ Ռուսիոյ Տէրութենէն Պետերուրդ կոչուեցաւ , և երբ Պրոկոպիոս անկաւ և անիշխանութիւնն զօրացաւ Յունաց Միաբանութեան մէջ , վերստին նոյն Հիւպատոսն եկաւ , պատուով պսակեալ

իւր Տէրութենէն և աւելի լիազօր իշխանութեամբ :

Այժմ Երուսաղէմի Ռուսաց վանուց հոգեւոր իշխանութիւնն ու վարչութիւնն ևս ենթարկուած է Հիւպատոսի իշխանութեան :

Բեթլէհէմի Ս. Ծննդեան տաճարի մեր սեպհական տեղերն աւելելու ժամանակ Յոյնք դարձեալ արգելքներ յարուցին և քանի մի տեղեր անաւել մնային :

Այս արգելքն յատուկ գիտմամբ էր, որպէս զի Սիւնաղարդ Գաւթի միւշ տէրեկութեան խնդիրն, որ քննութեան տուէ է, մոռացութեան տրուի : Թէպէտ Տէրութեան կողմէն աւելելու հրաման կար, բայց մեք նոր խռովութենէ խուսափելով՝ առանց դիմադրութեան դադրեցուցինք մեր աւելն, և ամեն պարագաներ տեղւոյս Բզէշխին հաղորդելով՝ Տնօրէնութեան կը սպասենք :

— Չմերան հորդահոսան անձրեւներու պատճառաւ Պաղէստինի հունձըն խիստ առատ է այս տարի : Արդէն արածօրայքն կը հնձուին և կը յուսաշուի, որ սղութիւն պիտի չըլինի այս տարի, եթէ երկրի բերքն մեծաւ մասամբ իւր մէջն մնայ և ոչ թէ չօգենաւներով ուրիշ երկիրներ փոխադրուի :

— Տեղւոյս մեր քաղաքացի ազգայիններէն Պ. Սրապիոն Մուրատեան, շնորհալի և լեզուազէտ երիտասարդն, որ Պրուսաց Հիւպատոսարանի Թարգման էր, ուղղեւորեցաւ ՚ի Բերլին, ուր պիտի պատրաստուի Արեւելեան լեզուաց և կամ իրաւագիտութեան քննութիւն տալ և վկայագիր ստանալ որով և մեծ ասպարէզ կը բացուի իւր տաղեւ Հիւպատոսական պաշտօնէութեան մէջ :

Պ. Սրապիոն Մուրատեան արդէն անձամբ ծանօթ է Պրուսիոյ Թագաժառանգ Իշխանին և այլ Գերմանական մեծամեծաց, որոնք մերթ ընդմերթ այցելութեան ելած են ՚ի Պաղէստին, ուստի քաջայայտ եմք, որ թէ իւր մեծանուն ծանօթից շնորհիւ և թէ իւր բնածիր ընդունակութեամբ պիտի հասնի իւր գեղեցիկ նպատակին ՚ի պատիւ իւր անձին և ՚ի փառս Հոյ երիտասարդութեան :

Պ. Սրապիոն երկու կրտսեր եղբայրներ եւս ունի, որոնք կը պատրաստուին Յուդայէի Գերմանական դըպրոցի մէջ, ժամանակին Գերմանիա երթալու և ուսման զանազան ճիւղերու մէջ կատարելագործուելու համար :

— Բաւական ժամանակ է, որ Յունաց նորընտիր Պատրիարքի դիմաւորողներն գնացած են ևս օր աւուր գալստեանն կը սպասուի : Քաղաքացի ժողովուրդք հպատակելու արամոգրութիւն չունին : Կը լսուի թէ նոր Պատրիարքն լուր զրկած է, որ մինչեւ Միաբանութիւն և Ժողովուրդք իրարու հետ չը համաձայնին, ինքն Իզմիրէն պիտի չեւնէ : Բայց տարակուսական է այս լուրն, աւելի հաւանականն այն է, որ մօտ օրերս պիտի յերուսաղէմ ժամանէ նորընտիր Պատրիարքն : Տեսնենք թէ յետ գալստեան խռովութիւնն դարձեալ պիտի շարունակուի՞ Միաբանութեան և Ժողովրդեան մէջ, թէ խաղաղութիւնն պիտի վերահասուտարի :

Ահա Կատարակ գովեստիւ կը խօսուի նորընտիր Պատրիարքին վերայ, ո՛չ ՚ի մասին ուսումնականութեան, այլ ՚ի մասին անխիւ բարուց և հովուական պարկեշտութեան :

Հեղեղէն խաղաղիր. Տպեալ 1869.
 Հենրիկոս եւ Մարիամ. Տպեալ 1870.
 Հրահանգ. սիրոյ, դործ Մայեղեան Գովէնի վարժապետի. Տպ. 1870.
 Ղերուբնա Եղեայի, եւ Եսայի կաթողիկոս Աղուանից. Տպեալ 1868.
 Ճաշոց գիրք. Տպեալ 1873.
 Ճառ հաղորդութեան. Տպեալ 1860.
 Ճառ դպրոցական. երկու փոքր տետրակներ. Տպեալ 1863 եւ միւսը՝ 1867.
 Ճարտատանութիւն առ ձեռն. աշխատասիրեաց Եղիաշար Մուրաճեան.
 Մատենադրութիւն նախնեաց. Տպեալ 1856.
 Մատթէոս Ուսհայկյե, դործ նախնեաց ժի դարու. Տպեալ 1869.
 Մեկնութիւն Եղեայեցոյ. Տպեալ 1850.
 Մեկնութիւն յայտնութեան. Ներսիս Լամբրոնացոյ. Տպեալ 1855.
 Մեկնայիւն Ասորոյ ժամանակագրութիւն, դործ ժի դար. Տպեալ 1871.
 —Նոյնը՝ ուրիշ գրչադրով բաղդատուած փոքր ինչ տարբերութեամբ.
 Զովհաննէս կաթողիկոս, սրատնութիւն Հայոց, դործ նախնեաց թ. դարու.
 Զովհէփ գեղեցիկ. Տպեալ 1849.
 Նարեկ. աշտթամասոյց Ս. Հօրն մերոյ գրիգորի Նարեկացոյ. Տպ. 1868.
 Նոր բնթերցարան. Տպեալ 1868.
 Ողբերգութիւն 'ի մեծն Ներսէս. Տպեալ 1863.
 Ուխտ հայրենասիրի. Բ. Տպ. 1874.
 Ուսումն բարուց. Տպեալ 1857.
 Ուսումն տրանսլանութեան, Տպեալ 1869.
 Պատմութիւն Ս. Գրոց. Տպեալ 1867.
 Պատմութիւն նոր կրակարանի, Տպեալ 1872.
 Պատմութիւն Ս. Երուսաղէմի, քաղուածոյ թարգմանութեամբ. Տպ. 1872.
 Պատմութիւն Երուսաղէմի. աշխատասիրեաց Խորէն վարդապետ. (")
 Պատմութիւն Ս. Լուսաւորի. Տպեալ 1867.
 Պատմութիւն Լէնկթիմուրայ. Տպեալ 1873.
 Պատմութիւն Հայոց. Տպեալ 1870.
 Պատմութիւն բարոյական. Տպեալ 1872.
 Պատմութիւն Հայաստանեայց, առաքելական Ս. Եկեղեցոյ. Տպեալ 1872.
 Պատմութիւն երկամայ պահպանութիւն 'ի Հապէշտան, Տպեալ 1871.
 —Նոյնը՝ Գաղղիարէն լեզուաւ.
 Ստրեա խաղաղիր, այլ եւ այլ անգամ տպուած.
 —Նոյնը՝ մեծ գիրքով
 —Նոյնը միջակ՝ դպրոցներու համար. Տպեալ 1873.
 Նոյնը՝ փոքր գիրքով եւ մանր գրով.
 Սիւն օրագիր, կաղմեալ 1866էն մինչև 1873. աշխարհիկ լեզուաւ.
 Ստորագրութիւն Երուսաղէմի. Տպեալ 1859. (")
 Վախճանութիւն փոխառաց մանկանց. Տպեալ 1868.
 Տանիկիլ տեղագրութիւն Երուսաղէմի. Տպեալ 1855. (")
 Տարեք ինաստասիրութեան, Տպեալ 1852. (")
 Տեղութիւն հովուական. Տպեալ 1856. (")
 Տրանսլանութիւն, Պատուելի Գրիգորի Փէշտիմալեան. Տպեալ 1855. (")
 Տծաճոց. Տպեալ 1868.
 Վերական, հին սնով, Տպեալ 1872.
 Վերական Գաղղիարէն լեզուի. Տպեալ 1871.
 Վերականութիւն Հայերէն լեզուի. Տպեալ 1870.
 Վերականութիւն Գաղղիարէն լեզուի. Տպեալ 1869.
 Վրդատնէտիկան համառօտ, Հայերէն եւ Արաբերէն լեզուաւ, Տպ. 1870.
 Արտոցոյց եւ զուլակութիւնք օղոց.

Վ.Բ.Ե.	Փ.Գ.
	30
2	20
2	
3	
300	
4	
	30
3	
6	
14	
25	
10	
16	
12	
10	
10	
12	
5	
4	
4	
18	
3	
8	
7	
5	
8	
4	
10	
6	
7	
16	
20	
20	
10	
6	
6	
3	
40	
4	
6	
3	
6	
8	
18	
10	
	20
2	20
4	
3	
2	
1	

ՅԱՆԿ

Մ Ա Յ Ի Ս

Կրթութիւն ժողովրդեան 'ի Զուիցերիա . (Շար.) .	97_101
Առեւտրականութիւն Տ. Ներսիսի Ամենայնապառ	
Պատրիարքի Կ. Պօլսոյ	102_105
Մ/րդա առ Մասիա	_106
Մասիա առ Մ/րդա	107_109
Քննութիւն աստուածաբանութեան վարդապետ	
տի (Գեղարքի) աստիճան ստանալու համար	110_114
Կռիւ 'ի լեառն ձիթենեաց	114_115
Նոր ընկերութիւն 'ի Գամասկոս	115_117
Քրիստոնէութիւն 'ի Հնդկիս	118_119
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ	119_120

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՈՒԱՆՔ

- Ա. Սեօնք ամեն ամիս կը հրատարակուի 24 երեսի թաղկացեալ մ'կապէս
աւթամալ թղթով :
- Բ. Տարեկան ցինն է երկու արծաթ Մէճիտիլէ, հանդերձ ծանապարհի
ծախքովը կանխիկ վճարելի :
- Գ. Զատ տետրակ առնել տղոքը, պէտք է ամեն մէկ տետրին շօրս դա.
հեկան վճարել :